# «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ»

## ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ
(1-12-րդ դասարաններ)

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել:

Ըստ ռուս երաժշտագետ Բ. Ասաֆևի՝ «Երաժշտությունը իրականության կերպարահնչյունային արտացոլումն է», նրանում հնչում է կենդանի խոսք՝ հուզված կամ հանգիստ զրույց, դիմում, կոչ, հարց ու պատասխան:

Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ:

Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն: Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին մեծ Կոմիտասը. «Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է: Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ - անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: **Երաժշտություն առարկայի չափորոշիչը և ծրագիրը ստեղծվել է ՀՊՉ-ի կարողունակություններին և վերջնարդյունքներին համապատասխան:**

**«Երաժշտություն» առարկայի ուսումնական հիմնական նպատակներն ու խնդիրները**

Տարրական դպրոց

- Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:
- Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:
- Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները:
- Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը:
- Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր:

Միջին դպրոց

- Դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր:
- Ձևավորել և ուղղորդել սովորողներին դեպի արդյունավետ երաժշտաստեղծագործական գործունեություն՝ ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա և այլն:
- Երաժշտական գործունեություն իրականացնել գործնականորեն կիրառելով ձեռք բերված երաժշտատեսական գիտելիքները և հմտությունները:
- Դաստիարակել աշխարհի նկատմամբ գեղագիտական վերաբերմունք, երաժշտական տեղեկատվության նկատմամբ՝ քննադատական վերաբերմունք:
- Ձևավորել և զարգացնել տրամաբանական, ստեղծագործական, կերպարային և ասոցիատիվ մտածողությունը, վերլուծական հմտությունները:
- Ձևավորել և զարգացնել ազգային երաժշտության գիտակ, ազգային ավանդույթները կրող, պահպանող ու սերունդներին փոխանցող սովորող:
- Ընդլայնել սովորողների երաժշտական և ընդհանուր մտահորիզոնը՝ շարունակել դաստիարակել երաժշտական ճաշակ, զարգացնել կայուն հետաքրքրություն այլ ժողովուրդների, դասական և ժամանակակից երաժշտության ժառանգության հանդեպ, արժևորել մշակութային բազմազանությունը:
- Շարունակել զարգացնել կայուն հետաքրքրություն դեպի ճանաչողական գործունեությունը, զարգացնել երեխաների երաժշտական ընդունակությունները, և կատարողական հմտությունները՝ հենվելով նրանց հետաքրքրությունների և հակումների վրա:
- Շարունակել զարգացնել քննական մտածողությունը, սեփական հիմնավորված դիրքորոշումը արտահայտելու, մյուսների կարծիքը լսելու, հարցելու, պատճառահետևանքային կապերը վերլուծելու և որոշումներ կայացնելու հմտությունը:

- Դաստիարակել հատուկ վերաբերմունք և հետաքրքրություն մշակութային օջախների գործունեության նկատմամբ, դրսևորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտություն ունկնդրելու մշակույթ:
- Ապահովել շարունակական կրթության և երաժշտության հետ հաղորդակցվելու հնարավորությունները բոլոր սովորողների համար:

## Ավագ դպրոց

- Դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր:
- Դաստիարակել աշխարհի նկատմամբ գեղագիտական վերաբերմունք, երաժշտական տեղեկատվության նկատմամբ՝ քննադատական վերաբերմունք:
- Շարունակել զարգացնել սովորողների ստեղծագործական երևակայությունը, նպաստել ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը:
- Սովորեցնել հուզականորեն և գիտակցված ընկալել երաժշտությունը, երաժշտական կերպարների զարգացումը և դրսևորել գնահատողական վերաբերմունք երաժշտության նկատմամբ:
- Ազգային երաժշտական արվեստի նմուշների հետ հաղորդակցվելու միջոցով, գիտակցել և արժևորել իր ազգային պատկանելիությունը, նրա պատմությունը, մշակույթը, դրսևորել հպարտություն, հարգալից վերաբերմունք սեփական ազգային արժեքների նկատմամբ, հասկանալ նրա տեղը համաշխարհային երաժշտության պատմության մեջ:
- Շարունակել զարգացնել երաժշտագեղագիտական ճանաչողությունը երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջը, հետագա բարոյագեղագիտական զարգացման, սոցիալիզացիայի, ինքնակրթության և ինքնարտահայտման համար:
- Գիտակցել և գնահատել երաժշտական ստեղծագործությունների հեղինակային իրավունքները, քննադատաբար վերաբերվել այն միջավայրին, որը ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիաների և լրատվամիջոցների կողմից, ճշտել տեղեկության հավաստիությունը:
- Գիտակցել երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում, հասկանալ նրա նշանակությունը, որպես միջմշակութային հաղորդակցության լեզվի:
- Դաստիարակել հատուկ վերաբերմունք՝ իր երկրի, մարզի, քաղաքի մշակութային օջախների գործունեության վերաբերյալ, համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ, պատկերասրահներ այցելելու ցանկություն և պահանջ:
- Մշակութային օջախներում դրսևորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտություն ունկնդրելու մշակույթ:
- Արժևորել երաժշտության դերը մարդու և հասարակության կյանքում, գեղեցիկը զգալու, գիտակցելու, արարելու, արվեստի աշխարհում անհատական դիրքորոշում, վերաբերմունք դրսևորելու միջոցով:

## Առաջարկվող գործունեության ձևերը

Վերոնշյալ նպատակների իրականացումը տեղի է ունենում երաժշտության դասավանդման ընթացքում ուսումնական գործունեության տարբեր ձևերի միջոցով: Երաժշտական ուսումնական գործունեության ձևերը դասաժամին կամ դրանից դուրս սովորողի կողմից կատարվող

գեղարվեստական գործունեությունն է՝ երաժշտությամբ ինքնարտահայտվելու միջոց: Երաժշտության մեկ դասաժամի ընթացքում իրականացվում է ուսումնական գործունեության մի քանի ձևեր: Սովորողների երաժշտական գործունեության բոլոր տեսակի աշխատանքների հիմքում երաժշտության ակտիվ ընկալումն է, երաժշտություն լսելու և նրա մասին մտորելու կարողության զարգացումը: Եթե տարրական դպրոցի սովորողի մոտ ուժեղ է երաժշտության ընկալման զգայական, հուզական կողմը (նա նկարագրում է միայն իր զգացողությունները և տպավորությունները), ապա միջին դպրոցում զգայականին ավելանում է նաև գիտակցականը: Զգայական, պատկերային մտածողությունից սովորողն անցնում է իմացական հասկացություններին, որոնք կազմավորում են երաժշտական մտքի խորությունը, գիտակցությունը, ձևավորում ու զարգացնում են երեխայի ստեղծագործական երևակայությունը:

Երաժշտություն առարկայի առաջարկվող գործունեության ձևերն են.

- երաժշտական ստեղծագործության ունկնդրում և երաժշտության պատմություն,
- երգերի անհատական և խմբային կատարում,
- երաժշտառիթմական և պարային շարժում
- անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա (շարժումային և երգային, հանպատրաստից հորինում),
- ուսումնական էքսկուրսիաներ՝ թանգարաններ, համերգասրահներ և այլ մշակութային օջախներ:

**Երաժշտության ունկնդրում և երաժշտության պատմություն.** Երաժշտության ունկնդրումը և ընկալումը բարդ գործընթաց է, որովհետև այն կախված է յուրաքանչյուր անհատի ներքին զգացողությունից, որը բացահայտելը, ձևավորելը և զարգացնելը բավականին դժվար է: Այն զարգացնում է ունկնդրելու կարողությունը, ուշադրությունը, վերլուծական ընդունակությունները և համեմատելու կարողությունը: Երաժշտության ունկնդրման միջոցով սովորողը ծանոթանում է նաև երաժշտության պատմությանը, ուսումնասիրում է ունկնդրվող ստեղծագործության ստեղծման պատմական ժամանակաշրջանը, կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները և այլն: Սովորողը հասկանում է, որ ունկնդրել չի նշանակում միայն լսել, պետք է ներկայացնել, մեկնաբանել, վերլուծել, երաժշտությունից ստացած տպավորությունները, դրսևորել հուզական արձագանք, ինքնուրույն կարծիք հայտնել, մենակ կամ խմբով ներկայացնել ուսումնասիրություններ, հետազոտական կամ նախագծային աշխատանքներ և այլն:

**Անհատական և խմբային երգեցողությունը** երեխաների ամենասիրելի գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նրա լսողությունը, ռիթմի ու լադի զգացողությունը: Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա և այլն: Խմբային երգեցողության միջոցով ձևավորվում և զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն (ունիսոն) և երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար: Խմբային երգեցողությունը զարգացնում է նաև մի շարք բարոյական արժեքներ՝ բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, միասնականություն, մեկը մյուսին լսելու, սեփական պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու կարողությունը: Տարրական դպրոցում սովորողները ծանոթանում են նաև ձեռքի նշաններով երգեցողությանը. այն զարգացնում է սովորողների երաժշտալսողական պատկերացումները: Ձեռքի նշանները նախապատրաստում են նաև միաձայնությունից անցումը բազմաձայն երգեցողությանը:

Երաժշտական գործունեության մյուս ձևը **երաժշտառիթմական և պարային շարժումն** է, որը նպաստում է սովորողների հոգևոր և ֆիզիկական ուժերի ներդաշնակ զարգացմանը, ժամանակի և տարածության մեջ ճիշտ կողմնորոշվելու ունակությանը: Գործունեության այս ձևի ընթացքում սովորողը կատարում է ունկնդրվող կամ կատարվող ստեղծագործությունների ռիթմական նվագակցություններ, սովորում և կատարում է պարային տարրեր, շարժումներ, կամ ամբողջական պարեր,

Երեխաների սիրած գործունեության տեսակներից է **խաղը,** մասնավորապես՝ երաժշտական շարժախաղերը, որոնք կարևոր դեր են կատարում կրտսեր դպրոցականների շարժումային գործունեության զարգացման գործում: Շարժախաղերը լայն հնարավորություն են տալիս երեխաներին ցուցադրելու ինքնուրույնություն և ստեղծագործական երևակայություն:

Գործունեության հաջորդ ձևը **անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա** է, որի գլխավոր նպատակը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Կիրառվում են շարժումային, պարային, երգչային և նվագարանային իմպրովիզացիաներ, փոքրիկ մեղեդիների հորինումներ, տրված անավարտ մեղեդու շարունակում և այլն: Իմպրովիզացիայի բոլոր միջոցները երեխաների մեջ զարգացնում են գեղարվեստական երևակայություն, ինքնուրույնություն, նպատակին հասնելու ձգտում, բարձրացնում երաժշտական գործունեության ակտիվությունը:

Սովորողները բոլոր երաժշտատեսական գիտելիքները ձեռք են բերում երաժշտությամբ գործնականորեն զբաղվելու ընթացքում, ծանոթանում են երաժշտության մեջ դրանց կիրառմանը: Շատ կարևոր է նաև սովորողների երաժշտագեղագիտական ճաշակի և մտահորիզոնի ձևավորումը, որը պետք է իրականացվի **ուսումնական էքսկուրսիաների**՝ (այդ թվում նաև վիրտուալ) համերգասրահներ, թանգարաններ, թատրոններ այցելության ընթացքում, դրանք կարելի է իրականացնել ակտիվացնելով թանգարանների կրթական ծրագրերի հետ համագործակցությունը: Սովորողի կյանքում կարևոր տեղ է զբաղվում նաև **դպրոցական համերգների կազմակերպումը**, որը ձևավորում է երաժշտություն ունկնդրելու սովորություն և միջոցառումներ կազմակերպելու փորձ:

Ուսումնական գործունեությունը մի ամբողջական գործընթաց է, որի մեջ հավասարապես ներկայացվում են գործունեության տարբեր ձևեր: Թե ինչ ծավալով և ինչ ձևերով կկիրառվեն դրանք, կախված է դասի նպատակից, խնդիրներից և տիպից:

## Երաժշտություն առարկայի ծրագիրը

Երաժշտություն առարկայի ուսումնական նոր ծրագիրը կառուցված է «ստեղծագործության» շուրջ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, վերաբերմունքի, արժեքների ձևավորման, զարգացման և կատարելագործման սկզբունքով, որտեղ սովորողը հանդես է գալիս՝ որպես ունկնդիր, կատարող, հանպատրաստից հորինող, արվեստագետ, քննադատ, հանդիսատես և այլն:

«Երաժշտություն» առարկայի չափորոշչով սահմանվել են հիմնական գաղափարներ և ենթագաղափարներ, որոնց համապատասխան՝ յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսվել են չափորոշչային պահանջներ կամ վերջնարդյունքներ: Ամեն գաղափարին համապատասխան վերջնարդյունքները ձևավորում են սովորողի գնահատման չափանիշը:

Սահմանված են հետևյալ հիմնական գաղափարները և ենթագաղափարները՝

### ՍՏԵՂԾՈՒՄ

- Ստեղծել և ձևավորել երաժշտական գաղափարներ, հաղորդակցվել և ինքնարտահայտվել դրանց միջոցով:
- Կազմակերպել և զարգացնել գեղարվեստական գաղափարներ և աշխատանքներ:
- Լրացնել և ավարտել երաժշտական ստեղծագործությունը:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Կատարել և ներկայացնել երաժշտական ստեղծագործությունների հիմնական գաղափարը:
- Զարգացնել և կատարելագործել կատարողական հնարները:
- Ներկայացման միջոցով փոխանցել երաժշտական ստեղծագործության իմաստը:

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

- Հասկանալ, ընկալել և վերլուծել երաժշտական ստեղծագործությունը:
- Ցուցաբերել հուզական արձագանք:
- Մեկնաբանել և գնահատել իր և մյուսների ստեղծագործական աշխատանքները:

ԿԱՊԱԿՑՈՒՄ

- Համադրել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը երաժշտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար:
- Առավել խոր ընկալման համար գեղարվեստական գաղափարները և ստեղծագործությունները համադրել հասարակական, մշակութային և պատմական համատեքստում տեխնոլոգիական տարբեր միջոցների և մոտեցումների, սեփական կենսափորձի և շրջապատող իրականության տեսանկյունից:

Բոլոր գաղափարները հնարավոր է իրականացնել հետևյալ միջոցներով.

- ✓ մանկական օպերաներից, ժողովրդական ծեսերից ընտրված կերպարների մարմնավորում արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարներով,
- ✓ երաժշտական ստեղծագործությանը հաղորդակցում և ինքնաարտահայտում,
- ✓ երաժշտական գիտելիքների և հմտությունների ձևավորում,
- ✓ երաժշտական ստեղծագործության նկատմամբ հուզական վերաբերմունքի դրսևորում,
- ✓ երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցության և պարային շարժումների ստեղծում և կատարում,
- ✓ փոքրիկ իմպրովիզացիաների, մեղեդիների հորինում,
- ✓ երաժշտական ստեղծագործության վերլուծում և մեկնաբանում, տարբեր միջոցներով սեփական տպավորությունների ներկայացում և ազգային ու համաշխարհային երաժշտության արժևորում,
- ✓ գեղարվեստական կամ ստեղծագործական գործունեության ընթացքում հետաքրքիր կերպարների ստեղծում և բեմադրում:

Ըստ ՀՊՉ-ում սահմանված կարողունակությունների և առարկայական չափորոշչի վերջնարդյունքների՝ ստեղծվել են երաժշտություն առարկայի ծրագրերը (1-12-րդ դասարաններ), որտեղ ուսումնասիրվող յուրաքանչյուր թեմայի համար նշված են՝

- նպատակները, ուղղորդող հարցադրումները
- առարկայական վերջնարդյունքներին համապատասխան թեմայի վերջնարդյունքները
- թեմայի բովանդակային բաղադրիչը, դրա հետ առնչվող գործունեության ձևերը
- խաչվող կամ ընդհանրական հասկացությունները, որոնք օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:
- միջառարկայական կապերը, որոնք նպաստում են միևնույն թեմայի մասին սովորողի բազմակողմանի և ամբողջական պատկերացումների ձևավորմանը:
- համապատասխանությունը Հանրակրթության պետական չափորոշչի կարողունակություններին և վերջնարդյունքներին:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ:

Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտական փորձառությունը կարող է նրանց համար արդյունավետ լինել լեզվական, ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սոցիալականացման համար:

Արվեստը հասկանալու բանալին առօրեականի և գեղարվեստականի փոխհարաբերության ընկալումն է, սովորողը արվեստի առարկաների դասավանդման ընթացքում իր ստացած գիտելիքների, ձևավորված հմտությունների, վերաբերմունքի և արժեքների շնորհիվ պետք է հասկանա, ընկալի, թե ինչպես է առօրեականը արվեստի միջոցով դառնում կատարյալ, այսինքն՝ գեղարվեստական:

| | | Վերջնարդյունքներ | |
|---|---|---|---|
| | | Երաժշտական գործու-նեության տեսակներ | Տարրական դպրոց |
| Ստեղծում | -Ստեղծել և ձևավորել երաժշտական գաղա-փարներ, հաղորդակցվել և ինքնարտահայտվել դրանց միջոցով:<br><br>-Կազմակերպել և զար-գացնել գեղարվեստական գաղափարներ և աշխա-տանքներ:<br><br>-Լրացնել և ավարտել գեղարվեստական ստեղ-ծագործությունը: | Երաժշտության ունկնդրում | **Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի** ունկնդրվող նյութի խաղային, հեքիաթային կերպարների, խոսակցական և երաժշտական ինտոնացիաների միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ: Բեմականացնի մանկական օպերաներից հատվածներ. հետաքրքիր երաժշտական կերպարներով, ներկայացնի կիրառված արտահայտչամիջոցները: Ճանաչի երաժշտության պարզ տեսակները: Ճանաչի և գրի նոտաները: |
| | | Երգեցողություն | Երաժշտական խաղերի, հեքիաթների, մանկական օպերաների, ժողովրդական ծեսերի ուսուցման ընթացքում **ստեղծի** հետաքրքիր կերպարներ արտահայտիչ եր-գեցողության, համապատասխան դիմախաղի և դերասանական հնարների միջոցով: |
| | | Երաժշտառիթմական շարժում | **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն, ,,բնական,, նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով և ռիթմական նվագարաններով: |
| | | Իմպրովիզացիա | **Ստեղծի** փոքրիկ իմպրովիզացիաներ՝ շարունակի և ավարտի փոքրիկ մեղեդին: Տրված քառատողով **հորինի** ռիթմական պատկեր և մեղեդի: |
| Ներկայացում | -Կատարել և ներկայաց-նել փոքրիկ երաժշտա-կան ստեղծագործություն-ներ, մեկնաբանել, հա-ղորդել, փոխանցել իմա-ստը, հիմնական գաղա-փարը:<br><br>-Զարգացնել և կատարե-լագործել գեղարվեստա-կան հնարները:<br>-Իմաստը փոխանցել գե-ղարվեստական ստեղ-ծագործության ներ-կայացման միջոցով | Կատարում | **Երգի** /մենակ կամ խմբով/՝ ներկայացնի հայ ազգային և այլ ազգերի ժողովրդական, կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանու-թյամբ, մաքուր ինտոնացիայով, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբա-վարի շարժումներին: Կատարումը ուղեկցի պարային կամ ռիթմական շարժումով: Ձեռքի նշաններով **երգի** հնչյունաշարի աստիճանները, և **կատարի** երկձայն մեղե-դիներ: |
| | | Ներկայացում | **Ներկայացնի** ստեղծագործության բնույթը, բովանդակությունը, տեսակը, տեմպը, տեմբրը, ռեգիստրը, դինամիկան: Երաժշտությունից ստացած իր տպավորություն-ներն ու զգացողությունները **ներկայացնի** գրագետ կապակցված խոսքով, օգտագոր-ծելով երաժշտական մասնագիտական եզրույթներ և նոր տեխնոլոգիաների հնարա-վորությունները: |

| | | | |
|---|---|---|---|
| Արձագանքում | -Հասկանալ, ընկալել ու վերլուծել երաժշտական ստեղծագործությունը:<br>-Մեկնաբանել երաժշտական ստեղծագործության բովանդակությունն ու գաղափարը:<br>- Կիրառել գնահատման ձևեր: | **Ընկալում և հուզական արձագանք** | Մեղեդու տրամադրությունը, բնույթը **արտահայտի** հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով, մեկնաբանի և **հիմնավորի** կատարած ռիթմական կամ պարային շարժումները:<br>**Վերլուծի** ստեղծագործությունը՝ նկարագրի բովանդակությունը, **համեմատի և ցույց տա** արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները: |
| | | **Մեկնաբանություն և գնահատում** | Ստեղծագործությունից ստացած սեփական զգացողություններն արտահայտի գույների միջոցով կամ նկարելով: **Մեկնաբանի** իր և դասընկերների աշխատանքերի լավ և վատ կողմերը, կատարի ինքնագնահատում և փոխադարձ գնահատում: |
| Կապակցում | -Սինթեզել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը երաժշտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար:<br><br>-Առավել խորը ընկալման համար գեղարվեստական գաղափարները և ստեղծագործությունները համադրել հասարակական, մշակութային և պատմական համատեքստում: | **Երաժշտությունը և նոր տեխնոլոգիաները** | **Բացատրի,** թե համացանցը ինչպես է օգնում իրեն ավելի հաճախ և արդյունավետ հաղորդակցվել երաժշտության հետ:<br>**Համեմատի** ժամանակակից, նաև նոր տեխնոլոգիաներով ստեղծված և դասական մի քանի ստեղծագործություններ, ընդգծի ընդհանրություններն ու առանձնահատկությունները և հիմնավորի իր նախասիրությունները:<br>**Ստեղծի** իր նախասիրած երգերի և ունկնդրվող ստեղծագործությունների շարք, ձայնագրի և օգտագործի առօրյայում, զվարճանքների ժամանակ<br>**Կատարի** առցանց դիտումներ համաշխարհային հայտնի օպերային թատրոններից և համերգասրահներից: |
| | | **Երաժշտության պատմություն** | **Դրսևորի** հետաքրքրություն, և սեր դեպի ժողովրդական և կոմպոզիտորական երաժշտությունը: **Բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում: **Դառնա** հայ ազգային երաժշտության կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: **Դրսևորի** հետաքրքրություն, սեր և հարգանք իր ազգային արժեքների նկատմամբ: |
| | | **Երաժշտության դերը և նշանակությունը կյանքում** | **Բացատրի**, երաժշտության դերն ու նշանակությունը իր առօրյայում՝ դպրոցական կյանքում, հանգստի և զվարճանքների ժամանակ:<br>**Մեկնաբանի,** երաժշտության կարևոր դերը ժողովուրդների մերձեցման գործընթացում, և **արժևորի** մշակութային բազմազանությունը:<br>**Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ, հաճախակի այցելի թանգարաններ, համերգասրահներ, թատրոններ, որպես ակտիվ հանգստի անցկացման վայրեր: |

| | | Վերջնարդյունքներ | |
|---|---|---|---|
| | | Երաժշտական գործունեության տեսակներ | Միջին դպրոց |
| Ստեղծում | -Ստեղծել և ձևավորել երաժշտական գաղափարներ, հաղորդակցվել և ինքնաարտահայտվել դրանց միջոցով:<br><br>-Կազմակերպել և զարգացնել գեղարվեստական գաղափարներ և աշխատանքներ:<br><br>-Լրացնել և ավարտել գեղարվեստական ստեղծագործությունը: | **Երաժշտության ունկնդրում** | Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործությունների ունկնդրումից ստացած տպավորությունների, կոմպոզիտորների և կատարողների արվեստի մասին, կատարի եզրահանգումներ:<br>**Ունկնդրի և արժևորի** տարբեր ժանրերի, երաժշտական ուղղությունների ստեղծագործությունները, թվարկի երաժշտական ստեղծագործությունների ոճային առանձնահատկությունները:<br>**Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի** ազգային և համաշխարհային երաժշտության միջոցով, համադրելով երաժշտական կերպարների յուրօրինակությունը: |
| | | **Երգեցողություն** | **Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ ճիշտ և արտահայտիչ երգեցողության գործընթացում, արժևորի բոլոր ժանրերի և երգչային ձայների բարձրարժեք կատարումները<br>**Ստեղծի** / մենակ կամ խմբով/ հայ և եվրոպական երգարվեստին կամ երգիչ կատարողներին նվիրված ուսումնասիրություն կամ հետազոտություն: |
| | | **Երաժշտառիթմական շարժում** | **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն և պարային շարժումներ:<br>Ընտրի ռիթմական նվագարաններ և **ստեղծի** երաժշտառիթմական բազմաձայն նվագակցություն: |
| | | **Իմպրովիզացիա** | Տրված թեմայով **հորինի** վարիացիաներ:<br>Տրված արտահայտչամիջոցներով **ստեղծի** երաժշտական կերպարներ և կազմակերպի թատերականացված երաժշտական ներկայացում: |

| | | | |
|---|---|---|---|
| Ներկայացում | -Կատարել և ներկայաց-նել փոքրիկ երաժշտա-կան ստեղծագործություն-ներ, մեկնաբանել, հա-ղորդել, փոխանցել իմա-ստը, հիմնական գաղա-փարը:<br>-Զարգացնել և կատարե-լագործել գեղարվեստա-կան հնարները:<br>-Իմաստը փոխանցել գե-ղարվեստական ստեղծագործության ներկայաց ման միջոցով: | Կատարում | **Երգի** /մենակ կամ խմբով/ ռոմանսներ և խմբերգեր օպերաներից, հայ հոգևոր երաժշտության նմուշներից մաքուր ինտոնացիայով/նաև երկձայն/, հստակ ռիթմով, նրբերանգներով, ներշնչանքով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվա-գակցությանը և խմբավարի շարժումներին: **Կատարի** ժամանակակից հայ կոմպոզի-տորների, հեղինակային և քաղաքային ոճի երգերը: **Կատարի** ազգային և կենցաղային ամբողջական պարեր /մենապար, զուգապար, խմբապար/: **Կիրառի** իր ստեղծագործական ունակություններն ու հմտությունները երաժշտության դասերից դուրս:<br>**Ներկայացնի** նույն երաժշտական գաղափարի մեկնաբանությունների առանձնա-հատկությունները տարբեր կոմպոզիտորների կողմից: |
| | | Ներկայացում | **Ներկայացնի** երաժշտական ստեղծագործության կերպարը, որպես մարդկային զգա-մունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն և համեմատի արվեստի այլ տեսակների կերպարների հետ: **Դրսևորի** երաժշտական և դերասանական զիտելիքներ և հմտություններ՝ երաժշտական կերպարը ճիշտ և արտահայտիչ ներկայացնելու համար, **Ներկայացնի** հանրամատչելի, դասական հանրամատչելի, հոգևոր և աշխարհիկ երաժշտության առանձնահատկությունները, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ: Նախագծային աշխատանքով ներկայացնի ժամա-նակակից տարբեր հեղինակների, երաժիշտ կատարողների երաժշտական ոճերի, ձեռագրերի և կատարման առանձնահատկությունները: |
| Արձագա | -Հասկանալ, ընկալել ու վերլուծել երաժշտական ստեղծագործությունը:<br><br>-Մեկնաբանել երաժշտական ստեղծա-գործության բովանդակությունն ու գաղափարը:<br><br>- Կիրառել գնահատման ձևեր: | Ընկալում և հուզական արձագանք | **Վերլուծի և մեկնաբանի** տարբեր ժանրերի երաժշտության հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք, իր անհատական երաժշտական տպավորու-թյունները **ներկայացնի** բանավոր ելույթների, գրավոր էսսեների, կամ շնորհան-դեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները: **Արժևորի** ազգային և համաշխարհային կատարողների և նվագախմբերի արվեստը: |
| | | Մեկնաբանություն և գնա-հատում | **Վերլուծի** երաժշտական ստեղծագործությունը, մեկնաբանի, թե, որ արտահայտչամի-ջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: **Արտահայտի** սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ ակտիվորեն ներգրավվելով քննարկումների, բանավեճերի մեջ, հարգի ուրիշների կարծիքը, հիմ-նավորի իր սեփական կարծիքը: Գնահատի ըստ նշված չափանիշների: |

| | | | |
|---|---|---|---|
| Կապակցում | -Սինթեզել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը երաժշտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար:<br><br>-Առավել խորը ընկալման համար գեղարվեստական գաղափարները և ստեղծագործությունները համադրել հասարակական, մշակութային և պատմական համատեքստում: | **Երաժշտությունը և նոր տեխնոլոգիաները** | **Ներկայացնի** նոր տեխնոլոգիաների դերը երաժշտական արվեստի նոր ուղղությունների առաջացման և զարգացման գործընթացում, և **արժևորի** դրանց միջոցով ստեղծված արվեստի կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:<br>Կատարի հետազոտություններ որևէ երաժշտական գաղափարի կամ հայտնի երաժիշտ կատարողի մասին, նյութը **ներկայացնի** կիրառելով նոր տեխնոլոգիաներ:<br>Փորձի **ստեղծել** որևէ ժողովրդական երգի ժամանակակից մշակում և կատարի: |
| | | **Երաժշտության պատմություն** | **Մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը ժողովրդական, դասական, ժամանակակից նվագարանների ու նվագախմբերի ստեղծման, նոր, ժանրերի, ոճերի առաջացման վրա:<br>Ուսումնասիրի 20-21-դարերի երաժշտական ուղղությունները և ներկայացնի որևէ կոմպոզիտորի ստեղծագործական գործունեությունը հետազոտական աշխատանքով: **Արժևորի** երաժշտությունը, որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց, արժևորի ազգային ավանդույթները: |
| | | **Երաժշտության դերը և նշանակությունը կյանքում** | Ազգային երաժշտության իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:<br>**Բացատրի** երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները, նախընտրած կատարողները, փոքրիկ շնորհանդեսով ներկայացնի տարվա ընթացքում իր այցելած համերգներից և թանգարաններից ստացած տպավորությունները: |

|  |  | Վերջնարդյունքներ |  |
|---|---|---|---|
|  |  | **Երաժշտական գործունեության տեսակներ** | **Ավագ դպրոց** |
| **Ստեղծում** | -Ստեղծել և ձևավորել երաժշտական գաղափարներ, հաղորդակցվել և ինքնաարտահայտվել դրանց միջոցով:<br><br>-Կազմակերպել և զարգացնել գեղարվեստական գաղափարներ և աշխատանքներ:<br><br>-Լրացնել և ավարտել գեղարվեստական ստեղծագործությունը: | **Երաժշտության ունկնդրում** | **Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի** հայ և համաշխարհային երաժշտական արվեստի գոհարներով: Երաժշտական անհատական կամ խմբային ստեղծագործական գործունեության ընթացքում ներկայացնի գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք օգտագործելով ինքնարտահայտման զանազան երաժշտական միջոցներ, և տեղեկատվական տեխնոլոգիաների բազմաթիվ հնարավորությունները: |
|  |  | **Երգեցողություն** | **Ստեղծի** /մենակ կամ խմբով/ իր նախընտրած ժամանակաշրջանի հայ կամ արտասահմանցի կոմպոզիտորների, երգիչ կատարողների ստեղծագործական գործունեությանը նվիրված նախագիծ կամ դպրոցական միջոցառման համար երաժշտական նյութ: |
|  |  | **Երաժշտառիթմական շարժում** | **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն, կիրառելով նոր տեխնոլոգիաները: |
|  |  | **Իմպրովիզացիա** | **Ստեղծի** /մենակ կամ խմբով/ նախընտրած դասական փոքրիկ մեղեդու համար ժամանակակից մշակումներ: |
| **Ներկայացում** | -Կատարել և ներկայացնել փոքրիկ երաժշտական ստեղծագործություններ, մեկնաբանել, հաղորդել, փոխանցել իմաստը, հիմնական գաղափարը:<br><br>-Զարգացնել և կատարելագործել գեղարվեստական հնարները:<br>-Իմաստը փոխանցել գեղարվեստական ստեղծագործության ներկայացման միջոցով: | **Կատարում** | **Երգի** /մենակ կամ խմբով/ ժողովրդական կամ դասական տարբեր ոճի երգեր, խմբերգեր՝ արտահայտիչ, ներշնչանքով, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին: Իրականացնի ստեղծագործական գաղափարներ անհատապես և խմբով: **Կիրառի** իր ստեղծագործական ունակություններն ու հմտությունները երաժշտության դասերից դուրս՝ մասնակցի դպրոցական երգչախմբի կամ այլ երաժշտական խմբերի աշխատանքներին: |
|  |  | **Ներկայացում** | **Ներկայացնի / մենակ կամ խմբով/** ստեղծագործություններից ստացած իր տպավորությունները պաստառներով, հետազոտություններով, նախագծային աշխատանքներով, գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ, հիմնավորի և մեկնաբանի իր կարծիքը: Խմբային աշխատանքի ընթացքում նպաստի խմբի ստեղծագործական և հետազոտական առաջադրանքների ընդհանուր արդյունքի կայացմանը: |

| | | | |
|---|---|---|---|
| Արձագանքում | -Հասկանալ, ընկալել ու վերլուծել երաժշտական ստեղծագործությունը:<br><br>-Մեկնաբանել երաժշտական ստեղծագործության բովանդակությունն ու գաղափարը:<br><br>- Կիրառել գնահատման ձևեր: | **Ընկալում և հուզական արձագանք** | **Հասկանա և բացատրի** ստեղծագործության գաղափարը, օգտագործված արտահայտչամիջոցները, ցուցաբերի հուզական արձագանք, իր հույզերն ու ապրումները արտահայտի տարբեր ձևերով՝ օգտվելով նոր տեխնոլոգիաներից: Ցուցաբերի վերլուծելու, համադրելու, և համեմատելու հմտություններ: |
| | | **Մեկնաբանություն և գնահատում** | **Համեմատի և մեկնաբանի** հակադիր կամ նույնանման բնույթի ստեղծագործությունները: **Տարբերի և ցույց տա** հայկական երաժշտության և տարբեր ազգերի երաժշտության բնութագրական առանձնահատկությունները, **դրսևորի** ստեղծագործական և անկախ մտածողություն: Գնահատումը իրականացնի ըստ սահմանված չափանիշների: |
| Կապակցում | -Սինթեզել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը երաժշտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար:<br><br>-Առավել խորը ընկալման համար գեղարվեստական գաղափարները և ստեղծագործությունները համադրել հասարակական, մշակութային և պատմական համատեքստում: | **Երաժշտությունը և նոր տեխնոլոգիաները** | **Օգտվի** համացանցի բազմաթիվ հնարավորություններից սեփական ստեղծագործական մտահղացումները իրականացնելու համար, իր ելույթները ուղեկցի տեսաձայնային միջոցներով:<br>**Զարգացնի** գեղագիտական երաժշտական ճաշակը, **ընդլայնի** ազգային և եվրոպական մշակութային ժառանգության նվաճումների մասին գիտելիքները, նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ուսումնական վիրտուալ այցերի /համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ/ միջոցով:<br>**Դրսևորի** հետաքրքրություն նոր տեխոլոգիաների միջոցով աշխարհի հանրահայտ կատարողների ու նվագախմբերի համերգներին առցանց ներկա լինելու հնարավորության նկատմամբ: |
| | | **Երաժշտության պատմություն** | **Բացատրի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում: Հասկանա նրա դերը որպես միջմշակութային հաղորդակցության լեզու, ճանաչի մշակութային բազմազանությունը:<br>**Արժևորի** հայ ազգային երաժշտությունը, դառնա նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |
| | | **Երաժշտության դերը և նշանակությունը կյանքում** | **Դրսևորի** հատուկ վերաբերմունք՝ իր երկրի, մարզի, քաղաքի մշակութային օջախների գործունեության վերաբերյալ, որպես իր կյանքի անքակտելի մաս: **Արժևորի** երաժշտության դերն ու նշանակությունը իր կյանքում, կազմակերպի և ակտիվ մասնակցի դպրոցական միջոցառումներին, համերգներին, ձեռք բերի ունկնդրելու փորձ, համերգներ հաճախելու մշակույթ: |

Տարրական դպրոց

Առաջին դասարան

| Թեմա 1. | Ես և երաժշտությունը /6 0 ժամ/ |
| --- | --- |
| **Նպատակներ**<br>• Ձևավորել պատկերացումներ շրջակա աշխարհի հնչյունային բազմազանության՝ բնական և արհեստական ձայների մասին,<br>• Ձևավորել նախնական պատկերացումներ երաժշտության ընդհանուր բովանդակության մասին և կարևորել նրա կապը կյանքի հետ,<br>• Ցույց տալ, որ բնության երևույթները, պատկերները, կյանքից վերցրած իրադարձությունները, մարդկային հույզերը, զգացմունքները իրենց արտացոլումն են գտնում երաժշտության մեջ,<br>• Խթանել ցուցաբերել հուզական արձագանք տարբեր բնույթի երաժշտական ստեղծագործությունների նկատմամբ<br>• Ձևավորել սեր և հետաքրքրություն երաժշտության նկատմամբ<br>• Գործնական աշխատանքների միջոցով ապահովել կոմպոզիտոր, կատարող և ունկնդիր կապի յուրացումը,<br>• Ձևավորել հմտություններ ճիշտ երգեցողության կանոններով երգելու համար<br>• Ակտիվորել ներգրավվել գեղարվեստական գործունեության մեջ: | **Ուղղորդող հարցեր**<br>• Որտեղի՞ց է հայտնվում երաժշտությունը<br>• Ովքե՞ր են այն ստեղծում<br>• Ի՞նչ երաժշտություն ես սիրում<br>• Ի՞նչ տեղ ունի երաժշտությունը քո կյանքում և առօրյայում: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի** ունկնդրվող երաժշտական նյութերի միջոցով:<br>• **Ստեղծի** երաժշտական կերպար արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով:<br>• **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն, ,,բնական,, նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:<br>• Շարունակի և ավարտի փոքրիկ մեղեդին:<br>• **Երգի** /մենակ կամ խմբով/՝ ներկայացնի հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր՝ ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:<br>• Մեղեդու տրամադրությունը, բնույթը **արտահայտի** հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով: | |

- **Բացատրի**, թե, իր առօրյայում երաժշտությունը ինչպիսի դեր է խաղում:

| Թեմայի բովանդակությունը | Առաջարկվող գործունեության ձևերը | Ընդհանրական գաղափարներ |
| --- | --- | --- |
| • Տարբեր բնույթի և բովանդա-կության երաժշտական ստեղծագործություններ<br>• Բնական և արհեստական ձայներ<br>• Երաժշտությունը, որպես կյանքի անբաժանելի մաս: | • Ունկնդրել, կատարել և հորինել երաժշտություն<br>• Կատարել երաժշտառիթմական և պարային շարժումներ<br>• Բնութագրել և պատմել երաժշտու-թյունից ստացած տպավորություն-ների մասին կամ գույներով ներկա-յացնել դրանք: | • **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Սովորողը հաղորդակցվելով երաժշտական ստեղ-ծագործությունների հետ, հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչպիսի երաժշտա-կան նախասիրություններ ունի, ինչպե՞ս կարող է ինք-նաարտահայտվել նրա միջոցով: Համընկնում է իր և իր ընտանիքի, ընկերների պատկերացումները երաժշտու-թյան մասին, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով:<br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողները ծանոթանում են այն հնարներին, միջոցներին, որոնցով բացահայտում և արտահայտում են երաժշտական ստեղծագործությունից ստացած իրենց տպավորությունները, զգացումները: Ճանաչելով և ուսումնասիրելով ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, հասկանում են, որ ուսումնական գործունեության ընթացքում պետք է կարողանան ստեղծագործաբար արտահայտել իրենց գաղափար-ները, և կյանքում տեսնեն գեղեցիկը, արժևորեն ստեղծարարությունը և գեղագիտությունը, դրանցով զարդարեն և հարստացնեն իրենց կյանքը: |

**Միջառարկայական կապեր**

- Մայրենի- Կարողանա ազատ հաղորդակցվել հայերենով, պատմի իր ընտանիքի, տան, իր զբաղմունքների, զվարճանքների մասին
- Կերպարվեստ- Կարողանա նկարագրել իր և շրջակա աշխարհի գույները և պատկերները
- Շրջակա աշխարհ- Կարողանա նկարագրել իր հույզերը, իր տպավորությունները, իր զգացողությունները շրջակա աշխարհի մասին:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**

- **S1, S10, S27, S28, S30, S32**

<table>
<tr><th colspan="2">Ենթաթեմա 1.</th><th>Երաժշտական խաղեր և հեքիաթներ /15/ ժամ</th></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ծանոթացնել երաժշտական խաղերի և հեքիաթների հետ<br>• Խաղի և հեքիաթի միջոցով ձևավորել պատկերացումներ երաժշտության բնույթի, տեմպի, հնչյունների բարձրության, դինա-միկայի մասին<br>• Հուզականորեն արձագանքել երաժշտական հեքիաթներին և խաղերին<br>• Խաղի և հեքիաթի միջոցով ձևավորել հմտություններ երաժշտական արտահայտչամիջոցները զգալու, հասկանալու և բացատրելու համար<br>• Ձևավորել հմտություններ երաժշտախաղային, հեքիաթային կերպարները նմանողական շարժումներով, արտահայտիչ դիմա-խաղով ներկայացնելու համար:</td><td>Ուղղորդող հարցեր<br><br>• Ի՞նչ է խաղը քո կյանքում<br>• Հաճելի՞ է սովորել խաղալով<br>• Ինչո՞վ են տարբերվում խաղերը և հեքիաթները երաժշտական խաղերից և հեքիաթներից:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի ունկնդրվող նյութի խաղային և հեքիաթային կերպարների միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ:<br>• Ստեղծի երաժշտախաղային և հեքիաթային կերպարներ արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով:<br>• Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն, ,,բնական,, նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:<br>• Ստեղծի խաղային իմպրովիզացիաներ<br>• Երգի /մենակ կամ խմբով/ ՝ ներկայացնի հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր՝ ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:<br>• Բնութագրի ստեղծագործությունը, պատմի սեփական զգացողությունների մասին, դրանք արտահայտի գույների միջոցով կամ նկարելով:<br>• Մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն<br>• Երաժշտական խաղեր<br>• Երաժշտական հեքիաթներ<br>• Խաղային իմպրովիզացիաներ<br>• Թեմատիկ նկարներ</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Խաղալ երաժշտական խաղեր, կա-տարել նմանողական շարժումներ<br>• Սովորել և բեմադրել հատվածներ երաժշտական հեքիաթներից կամ ամբողջական հեքիաթներ<br>• Հորինել երաժշտական խաղեր կամ մեղեդի իրենց սիրած հեքիաթի որևէ հերոսի համար:<br>• Երաժշտական խաղային և հեքիաթա-յին կերպարներից ստացած տպավո-րությունները ներկայացնել գույներով</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Այս առումով կարևոր է, որ սովորողը հասկանա, թե ո՛վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կա-րող է ինքնաարտահայտվել երաժշտական խաղերի, հեքիաթների, խաղային իմպրովիզացիաների միջոցով: Համընկնում է իր և իր ընտանիքի, ընկերների պատ-կերացումները երաժշտության մասին, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | կամ նկարելով: | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողները երաժշտական խաղերի, խաղային իմպրովիզացիաների, երաժշտական հեքիաթային կերպարների միջոցով դրսևորում են իրենց ստեղծագործական հմտությունները և դերասանական հնարները, բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, զգացմունքներ, բնության երևույթներ և այլն: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի**- Կարողանա ազատ հաղորդակցվել հայերենով,  հասկանալ և պատմել երաժշտական հեքիաթների և մանկական խաղերի բովանդակությունը:
- **Կերպարվեստ**-Կարողանա նկարել պատկերներ խաղերից կամ հեքիաթային կերպարների նկարներ
- **Ֆիզկուլտուրա**-Երաժշտական խաղերի ընթացքում կիրառել սպորտային խաղերի տարրեր:
- **Թատրոն**-Կարողանա իրականացնել երաժշտական խաղերի և հեքիաթների բեմադրություն
- **Տեխնոլոգիա**-Կարողանա պատրաստել խաղերի և հեքիաթների պարագաներ:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**

- S1, S10, S27, S28, S30, S32

| Ենթաթեմա 2. | Ինչից է կառուցվում երաժշտությունը/ երաժշտական այբուբեն 15 ժամ/ |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ձևավորել պատկերացումներ երաժշտական հնչյունների, նրանց տևողության և բարձրության մասին<br>• Ձևավորել պատկերացումներ ,,մեղեդու՛՛ որպես երաժշտական ստեղծագործության իմաստըն արտահայտող հասկացության մասին<br>• Ձևավորել հմտություններ ձեռքի նշաններով երգեցողության մասին<br>• Ձևավորել հմտություններ ստեղծագործությունների բնութագրական գծերը որոշելու և տարբերելու համար: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ինչի՞ց է կառուցվում երաժշտությունը<br>• Ո՞րն է երաժշտության այբուբենը<br>• Ինչպե՞ս են երաժշտական հնչյունները վերածվում հնչող երաժշտության<br>• Ի՞նչ է նշանակում մեղեդի<br>• Ո՞րտեղից է այն հայտնվում<br>• Իսկ դու կարո՞ղ ես հորինել մեղեդի |

**Վերջնարդյունքներ**

- **Իմանա** նոտաների անունները և ձեռքի նշաններով երգի դրանք
- Երաժշտական նյութը **ներկայացնի** համապատասխան ռիթմական նվագակցությամբ՝ ծափերով, ճտտոցներով, դոփյուններով:
- **Մեկնաբանի** ստեղծագործության բովանդակությունը, ներկայացնի իր տպավորություններն ու զգացողությունները նաև գույներով կամ նկարելով, նշի ստեղծագործության բնույթը, տեմպը, դինամիկան:
- Մեղեդու տրամադրությունը, բնույթը **արտահայտի** հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:

- **Շարունակի և ավարտի** փոքրիկ մեղեդին:

| **Թեմայի բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Տարբեր բնույթի և բովանդակության երաժշտական ստեղծագործություններ, ունկնդրման և կատարման համար:<br>• Երկար և կարճ, բարձր և ցածր, ուժեղ և մեղմ հնչյուններ,<br>• Ձեռքի նշաններ: | • Գործնական աշխատանքի միջոցով ներկայացնել երաժշտական հնչյունները, նրանց տևողությունը, բարձրությունը, ուժգնությունը<br>• Ունկնդրվող և կատարվող ստեղծագործությունների միջոցով բացատրել մեղեդի և նվագակցություն հասկացությունները, դրանց բնույթը, բովանդակությունը, տեմբրը, ռեգիստրը<br>• Ծանոթացնել ձեռքի նշաններին:<br>• Ձեռքի նշաններով երգել հնչյունաշարի ձայնաստիճանները: | **Համակարգեր և մոդելներ:**<br>Երաժշտական հնչյունները ըստ իրենց բարձրության միմյանց հետ գտնվում են որոշակի հարաբերակցության մեջ, այսինքն միասին վերցրած կազմում են համակարգ: Երաժշտական համակարգի հնչյունները ըստ բարձրության հաջորդականորեն դասավորված կոչվում են հնչյունաշար, որի աստիճանները յոթն են,, որոնք ունեն վանկային և տառային անուններ՝ դո, ռե, մի, ֆա… |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի**- Կարողանա ներկացացնել Հայոց այբուբենը, հնչյունները, տառերը և համեմատել նոտաների հետ
- **Կերպարվեստ**- Կարողանա ներկայացնել կերպարվեստի տարրերը՝ գույնը, գիծը, նյութը և այլն:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**

- S1, S10, S27, S28, S30, S32

| Ենթաթեմա 3. | **Իմ սիրելի տոները և երաժշտությունը /15/ ժամ** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ձևավորել պատկերացումներ կյանքի ուրախությունների, տոնակատարությունների և երաժշտության կապի մասին<br>• Ձևավորել հմտություններ այդ կապը տեսնելու, բացատրելու և կարևորելու համար<br>• Դրսևորել գնահատողական վերաբերմունք երաժշտության նկատմամբ<br>• Արժևորել երաժշտության նշանակությունը իր կյանքումը: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ո՞ր տոներն են ամենակարևորը քո կյանքում<br>• Ի՞նչ դեր ունի երաժշտությունը այդ տոնակատարությունների ընթացքում<br>• Կարո՞ղ ես դրանք անցկացնել առանց երաժշտության: |

**Վերջնարդյունքներ**

- **Հաղորդակցվի և ինքնարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով:
- **Երգի** /մենակ կամ խմբով/՝ ներկայացնի հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական տոնական երգեր՝ ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ:
- Երաժշտական նյութը **ներկայացնի** համապատասխան ռիթմական նվագակցությամբ՝ ծափերով, ճտտոցներով, դոփյուններով:
- **Բացատրի,** թե համացանցը ինչպես է օգնում իրեն ավելի հաճախ հաղորդակցվել երաժշտության հետ:
- **Ստեղծի** տոնական երգերի և ունկնդրվող ստեղծագործությունների շարք, ձայնագրի և օգտագործի տոների ժամանակ
- **Բացատրի**, թե, իր առօրյայում երաժշտությունը ինչպիսի դեր է խաղում:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Տոնական երգեր<br>• Ունկնդրվող ուրախ, պարային և տոնական ստեղծագործություններ: | • Ուսուցանել տոնական երգեր<br>• Ունկնդրել ուրախ երգային և պարային ստեղծագործություններ<br>• Բացատրել դրանց տրամադրությունները և մեկնաբանել, թե ինչու են տոնակատարությունները ուղեկցվում հենց այդպիսի ստեղծագործություններով: | • **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Սովորողը երաժշտության հետ հաղորդակցվելով հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է տոնական օրերին ինքնարտահայտվել մանկական ուրախ երգերի ու պարեղանակների միջոցով: Համընկնում է իր և իր ընտանիքի, ընկերների պատկերացումները երաժշտության մասին, ինչպես է կարողանում իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, հասկանա, որ երաժշտությունը իր կյանքի անբաժանելի մասն է: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի**- Կարողանա ազատ հաղորդակցվել հայերենով, պատմել, թե ինչպես են ընթանում իրենց ընտանեկան, ծիսական և պետական տոները
- **Ես և շրջակա**- Կարողանա ազատ հաղորդակցվել հայերենով և ներկայացնել, այդ տոների մասնակիցներին՝ իր ընկերներին, հարազատներին:
- **Կերպարվեստ**- Կարողանա պատրաստել տոնական նկարներ
- **Տեխնոլոգիա**- Կարողանա պատրաստում տոնական նվերներ:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**

- S1, S10, S16, S18, S27, S28, S30, S32

## Երկրորդ դասարան

<table>
<tr><td colspan="2">Թեմա 1.</td><td>Երաժշտության պարզ ու մատչելի  տեսակները /8 ժամ/</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել գիտելիքներ երաժշտության ամենապարզ տեսակների մասին<br>• Ձևավորել հմտություններ դրանք ունկնդրելու, կատարելու և ներկայացնելու համար<br>• Ձևավորել հմտություններ դրանք բնութագրելու, մեկնաբանելու համար:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Երաժշտության ի՞նչ տեսակներ գիտես<br>• Ո՞րն է դրանցից քեզ համար ավելի սիրելի:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի ունկնդրվող նյութի միջոցով: Ճանաչի երաժշտության պարզ տեսակները:<br>• Ստեղծի երաժշտական կերպար արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով:<br>• Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն, ,,բնական,, նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:<br>• Երգի /մենակ կամ խմբով/ ՝ ներկայացնի հայ ազգային և այլ ազգերի պարզ մանկական երգեր՝ ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, արտահայտիչ:<br>• Մեկնաբանի ստեղծագործության բովանդակությունը, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի գույներով կամ նկարելով, նշի ստեղծագործության տեսակը, բնույթը, տեմպը, դինամիկան:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<br>• Երգեր, պարեր, քայլերգեր<br>• Դրանց տեսակները</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ուսուցանել բազմաբնույթ մանկական երգեր, պարեր, քայլերգեր<br>• Ունկնդրել տարբեր տեսակի երգեր, պարեր, քայլերգեր, բնութագրել և մեկնաբանել<br>• Կատարել երաժշտառիթմական կամ պարային շարժումներ<br>• Ստեղծել փոքրիկ իմպրովիզացիաներ:</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Օրինաչափություն<br>Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման արդյունքում: Սովորողը ուսումնասիրելով երաժշտության պարզ տեսակները, սկսում է դրանք դասակարգել, զգալ և ցույց տալ դրանց նմանությունները, տարբերությունները:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Մայրենի-Գրագետ ու կապակցված խոսքով ներկայացնել գրականության պարզ տեսակները և համեմատել երաժշտության հետ:<br>• Պարարվեստ- սովորել պարզ պարային շարժումներ<br>• Ֆիզկուլտուրա-երաժշտության ուղեկցությամբ քայլել հավասար և համաչափ քայլով:</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ<br>• S1, S10, S27, S28, S30, S32</td></tr>
</table>

<table>
<tr><th>Թեմա 2.</th><th colspan="2">Ուր են տանում երգը, պարը, քայլերգը/8 ժամ/</th></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել պատկերացումներ երգի, պարի քայլերգի զարգացման վերաբերյալ<br>• Ձևավորել պատկերացումներ օպերայի, բալետի և սիմֆոնիայի վերաբերյալ<br>• Ձևավորել հմտություններ օպերայից, բալետից, սիմֆոնիայից փոքրիկ հատվածներ լսելու և ընկալելու համար<br>• Ձևավորել և զարգացնել երգը, պարը, քայլերգը օպերայում, բալետում և սիմֆոնիայում լսելու և ճանաչելու կարողություն<br>• Ձևավորել հատուկ վերաբերմունք՝ սեր և հետաքրքրասիրություն օպերայի, բալետի և սիմֆոնիայի նկատմամբ:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Երևանում որտե՞ղ է գտնվում օպերայի և բալետի թատրոնի շենքը<br>• Լսե՞լ ես օպերայի, բալետի, սիմֆոնիայի մասին<br>• Տեղյա՞կ ես, թե ինչ նվագախումբ է նվագում այնտեղ<br>• Ի՞նչ նվագարաններ են նվագում այդ նվագախմբում:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի ունկնդրվող նյութի միջոցով, կատարի կերպարին համապատասխան նմանողական շարժումներ<br>• Ստեղծի երաժշտական կերպար արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով:<br>• Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն, ,,բնական,, և ռիթմական նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:<br>• Երգի /մենակ կամ խմբով/ ներկայացնի հայկական մանկական օպերաներից հատվածներ՝ ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, արտահայտիչ:<br>• Մեղեդու տրամադրությունը, բնույթը արտահայտի հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:<br>• Բնութագրի ստեղծագործության իմաստը, սեփական զգացողություններն արտահայտի գույների միջոցով կամ նկարելով: Բացատրի իր և դասընկերների աշխատանքերի լավ և վատ կողմերը:<br>• Բացատրի, թե համացանցը ինչպես է օգնում իրեն ավելի հաճախակի հաղորդակցվել երաժշտական ստեղծագործությունների հետ:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<br>• Հատվածներ մանկական օպե-րաներից, բալետներից, սիմֆոնիա-ներից /որտեղ առկա են երգի, պարի, քայլերգի տեսակները/,<br>• Սիմֆոնիկ նվագախմբի նվագա-րանները:</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ունկնդրել մանկական օպերաներից, բալետներից, սիմֆոնիաներից փոքրիկ հատվածներ և ներկայացնել երգի, պարի և քայլերգի զարգացումը, ձևափոխությունները<br>• Կատարել օպերաներից փոքրիկ հատվածներ<br>• Ներկայացնել սիմֆոնիկ նվագախմբի նվագարանները<br>• Կատարել մանկական օպերայի հերոսների երգերը և նմանողական շարժումները</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Օրինաչափություն<br><br>Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտ-ման արդյունքում: Սովորողը ուսումնասիրելով երաժշ-տության պարզ տեսակները, սկսում է դրանք դասակարգել, զգալ և ցույց տալ դրանց նմանությունները, տարբերությունները և դրանց զարգացումը:<br><br>• Անհատական և մշակութային արտահայտում<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Ուսումնասիրելով երաժշտական ստեղծագործությունը,</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | • Նկարել երաժշտությունից ստացած տպավորությունները | սովորողը հասկանում է, որ երաժշտության պարզ տեսակները վերաճում և դառնում են մեծ կտավի ստեղծագործություններ ,բնութագրում են դրանք, ցուցա բերում հուզական արձագանք, սեփական զգացողություններն արտահայտում գույների միջոցով կամ նկարելով, արժևորում են գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

**Միջառարկայական կապեր**

- **Կերպարվեստ**- Կարողանա ստեղծել օպերային հերոսների նկարները, կամ նկարչական ձևավորում
- **Տեխնոլոգիա**- Կարողանա պատրաստել թեմատիկ հերոսների տիկնիկներին
- **Թատրոն**- Կարողանա բեմադրել օպերաներից հատվածներ:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**

- **S1, S10, S16, S27, S28, S30, S32**

| Թեմա 3. | **Երաժշտությունը իմ սիրած մուլտֆիլմերում /8 ժամ/** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ծանոթացնել մուլտֆիլմերի երաժշտությանը<br>• Ձևավորել պատկերացումներ մուլտֆիլմերի երաժշտության դերի և նշանակության մասին<br>• Ուսուցանել երգերը, դիտել տեսագրությունը և ունկնդրել մուլտֆիլմերի երաժշտությունը<br>• Ձևավորել հմտություններ երաժշտությունը բնութագրելու, մեկնաբանելու և իր տպավորությունները խոսքով կամ նկարելով արտահայտելու համար: | **Ուղղորդող հարցեր**<br>• Պե՞տք է արդյոք երաժշտությունը մուլտֆիլմերում<br>• Ո՞ր մուլտֆիլմերի երաժշտությունն ես սիրում<br>• Հետաքրքիր կլինի՞ մուլտֆիլմը դիտել առանց երաժշտության: |

**Վերջնարդյունքներ**

- **Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով, կատարի կերպարին համապատասխան նմանողական շարժումներ
- **Ստեղծի** երաժշտական կերպար արտահայտիչ երգեցողության և համապատասխան դիմախաղի միջոցով:
- **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն, ,,բնական,, և ռիթմական նվագարաններով՝ ձեռքերով, ոտքերով:
- **Երգի** /մենակ կամ խմբով/ ներկայացնի հայկական և այլ ազգերի մուլտֆիլմերից երգեր՝ ճիշտ կեցվածքով, շնչառությամբ, հստակ առոգանությամբ, արտահայտիչ:
- Մեղեդու տրամադրությունը, բնույթը **արտահայտի** հույզերով, երգելով, պարելով կամ ռիթմական շարժումներով:
- **Բնութագրի** ստեղծագործության իմաստը, սեփական զգացողություններն արտահայտի գույների միջոցով կամ նկարելով: Բացատրի իր և դասընկերների աշխատանքերի լավ և վատ կողմերը:
- **Բացատրի,** թե համացանցը ինչպես է օգնում իրեն ավելի հաճախակի հաղորդակցվել մուլտֆիլմերի և դրանց երաժշտության հետ:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Հայկական և արտասահմանյան | • Դիտել կամ ունկնդրել հայկական և | • **Անհատական և մշակութային արտահայտում** |

| | | |
|---|---|---|
| մուլտֆիլմեր, դրանց երգերը և երաժշտությունը<br>• Դրանց առանձնահատկություն-ները և համապատաս-խանությունը ֆիլմի կերպարին: | այլ մուլտֆիլմերի երաժշտություններ<br>• Կատարել երգեր մուլտֆիլմերից, կատարելով երաժշտառիթմական, պարային կամ նմանողական շարժումներ<br>• Բացատրել դրանց բնույթը, տրամադրությունը,<br>• Նկարել երաժշտությունից ստացած տպավորությունները: | Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Ուսումնասիրելով մուլտֆիլմերի երաժշտությունը, սովո-րողը հասկանում է, որ, դրանք առանց երաժշտության հետաքրքիր չեն լինի: Բնութագրում են երաժշտությունը, ցուցաբերում հուզական արձագանք, սեփական զգացո-ղություններն արտահայտում գույների միջոցով կամ նկարելով, արժևորում են գեղագիտությունը և ստեղծա-րարությունը: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի**-Կարողանա գրագետ հայերենով ներկայացնել հեքիաթների և մուլտֆիլմերի գրական կերպարների համապատասխանությունը երաժշտությանը
- **Թատրոն**- Կարողանա կատարել կերպարների նմանողական շարժումներ
- **Կերպարվեստ**- Կարողանա նկարել մուլտֆիլմերի հերոսներին կամ թեմատիկ նկարազարդումներ կատարի
- **Տեխնոլոգիա** -Կարողանա մուլտֆիլմերի հերոսների կերպարներով խաղալիքներ պատրաստել:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**

**S1, S10, S16, S27, S28, S30, S32**

| Թեմա 4. | **Երաժշտական արտահայտչամիջոցներ՝ տեմպ, ռիթմ, տեմբր, դինամիկա, ռեգիստր և այլն /8 ժամ/** |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ձևավորել պատկերացումներ և գիտելիքներ երաժշտական արտահայտչա-միջոցների մասին<br>• Ձևավորել հմտություններ դրանք ճանաչելու, տարբերելու և մեկնաբանելու համար<br>• Ձևավորել հմտություններ երաժշտական ստեղծագործության մեջ արտահայտչամիջոցները զգալու, ընկալելու և ներկայացնելու համար:<br>• Արժևորել արտահայտչամիջոցների դերը ստեղծագործության մեջ: | **Հիմնական հարցեր**<br>• Ինչպե՞ս է կոմպոզիտորը ստեղծում որևէ երաժշ-տական ստեղծագործություն<br>• Դու կարո՞ղ ես մի քանի արտահայտչամիջոցներով ստեղծել փոքրիկ երգ կամ մեղեդի: |

**Վերջնարդյունքներ**

- **Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի** ունկնդրվող նյութի միջոցով, կատարի համապատասխան նմանողական շարժումներ, ներկայացնի արտահայտչամիջոցները:
- **Ստեղծի** փոքրիկ մեղեդի տրված արտահայտչամիջոցներով:
- **Մեկնաբանի** ստեղծագործության բովանդակությունը, իր տպավորություններն ու զգացողությունները, նշի արտայատչամիջոցները՝ բնույթը, տեմպը, դինամիկան, ռեգիստրը:
- **Բնութագրի** ստեղծագործության իմաստը, սեփական զգացողություններն արտահայտի գույների միջոցով կամ նկարելով:

<table>
<tr><td colspan="2"></td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն<ul><li>Տարբեր բնույթի, տեսակի ստեղծագործություններ և դրանց արտահայտչամիջոցները:</li></ul></td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<ul><li>Ունկնդրել տարբեր բնույթի երաժշտական ստեղծագործություններ և որոշել արտահայտչամիջոցները</li><li>Կատարել տարբեր երգեր գիտակցաբար փոփոխելով արտահայ-տչամիջոցները</li><li>Հուզականորեն արձագանքել երաժշտական ստեղծագործությանը և կատարել ռիթմական կամ պարային շարժումներ:</li><li>Տրված արտահայտչամիջոցներով ստեղծել փոքրիկ մեղեդի:</li></ul></td></tr>
<tr><td>Ընդհանրական գաղափարներ<br>Պատճառ և հետևանք<br><br>Սովորողը հասկանում է, ստեղծագործության բովանդակության և երաժշտական արտահայտչամիջոցների պատճառահետևանքային կապը, որ ստեղծագործության բովանդակությունից է բխում օգտագործված արտահայտչամիջոցների ընտրությունը, և դրանց փոփոխման արդյունքում կարող ենք ստանալ ամբողջովին ուրիշ բնույթի և տրամադրության ստեղծագործություն:</td><td>Միջառարկայական կապեր՝<ul><li>Մայրենի-Կարողանա գրագետ հայերենով ներկայացնել խոսքային արտահայտչամիջոցներ՝ շեշտ, բացականչություն հարցական, առոգանություն…</li><li>Կերպարվեստ- Կարողանա ներկայացնել կերպարվեստի արտահայտչամիջոցները՝ գունապնակ, գծի տեսակներ, նյութերի տեսակներ…</li><li>Թատրոն- Կարողանա ներկայացնել թատերական արվեստ արտահայտչամիջոցները՝ դիմախաղ, մարմնի շարժումներ, ձայնի երանգներ և այլն:</li></ul></td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ<ul><li>S1, S10, S16, S27, S28, S30, S32</li></ul></td></tr>
</table>

## Երրորդ դասարան

<table>
<tr><td colspan="2">Թեմա 1.</td><td>**Ինտոնացիա՝ նկարագրական և արտահայտչական երաժշտություն /8 ժամ/**</td></tr>
<tr><td colspan="2">**Նպատակներ**<br>• Ձևավորել պատկերացումներ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաների մասին<br>• Ձևավորել հմտություններ ճանաչելու և տարբերելու արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները<br>• Երաժշտության ունկնդրման, կատարման և մեկնաբանման ընթացքում ներկայացնել նրա արտահայտչական կամ նկարագրական բնույթը:<br>• Երաժշտությունից ստացած տպավորությունները ներկայացնել գույներով կամ փոքրիկ պատմվածքով:</td><td>**Ուղղորդող հարցեր**<br>• Ինչի՞ մասին է պատմում երաժշտությունը<br>• Ի՞նչ միջոցներով է արտահայտում և նկարագրում երաժշտությունը:</td></tr>
<tr><td colspan="3">**Վերջնարդյունքներ**<br>• **Ստեղծի** խաղային և հեքիաթային կերպարներ արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով:<br>• **Տարբերի և ցույց տա** արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները:<br>• **Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի** արտահայտչական և նկարագրական ինտոնացիաների միջոցով և ճանաչի դրանք: Բեմականացնի մանկական օպերաներից հատվածներ և **ստեղծի** հետաքրքիր երաժշտական կերպարներ:<br>• **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն ,,բնական՛՛ և ռիթմական նվագարաններով:<br>• Տրված քառատողով **հորինի** ռիթմական պատկեր և մեղեդի:<br>• **Երգի** /մենակ կամ խմբով/ ժողովրդական և կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ,<br>• **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:<br>• **Համեմատի և բացատրի** հակադիր բնույթի ստեղծագործությունները:<br>• **Արժևորի** կյանքի ու երաժշտության կապը:</td></tr>
<tr><td>**Թեմայի բովանդակություն**<br>• Բազմաբնույթ երգեր և ունկնդրվող ստեղծագործություններ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներով՝ ստեղծագործություններ, որոնք նկարագրում են բնության պատկերներ, երևույթներ և ստեղծագործություն-</td><td>**Առաջարկվող գործունեության ձևեր**<br>• Ունկնդրել բազմաբնույթ երաժշտական ստեղծագործություններ, մեկնաբանել դրանց բնույթն ու իմաստը<br>• Երգել բազմաբնույթ ստեղծագործություններ և մեկնաբանել բնույթը<br>• Կատարումները ուղեկցել երաժշտառիթմական և պարային շար-</td><td>**Ընդհանրական գաղափարներ**<br>• **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Հաղորդակցվելով երաժշտական ստեղծագործությունների հետ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնաարտահայտվել երաժշտության</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| ներ, որոնք արտահայտում են մարդկային զգացողություններ, տրամադրություն և այլն: | ժումներով, հիմնավորել դրանք<br>• Ստեղծել փոքրիկ ինպրովիզացիաներ արտահայտչական և նկարագրական ինտոնացիաներով: | միջոցով: Արժևորում է երաժշտության և կյանքի կապը, հասկանում է, որ երաժշտությունը կարող է նկարագրել բնության պատկերներ և երևույթներ և արտահայտել մարդկային հույզեր ու զգացմունք-ներ: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի**-Կարողանա ներկայացնել հեքիաթի կամ պատմվածքի նկարագրական կամ արտահայտչական մասերը
- **Կերպարվեստ**- Կարողանա ներկայացնել կերպարվեստի նկարագրող և կամ արտահայտող ժանրերը՝ բնանկարներ, նատյուրմորտներ, դիմանկարներ
- **Թատրոն**- Կարողանա ներկայացնել գրական ստեղծագործության նկարագրական և արտահայտչական մասերը:

**Կապը հարակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ**
**S1, S10, S16, S17, S18, S19, S24, S27, S28, S30, S32**

| Թեմա 2. | Խոսակցական և երաժշտական ինտոնացիաներ /8 ժամ/ |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ձևավորել պատկերացումներ երաժշտական խոսքի վերաբերյալ<br>• Տալ գիտելիքներ երաժշտական խոսքի տարրերի մասին՝ մոտիվ, ֆրազ, նախադասու-թյուն, պարբերություն<br>• Համեմատել երաժշտական և գրական խոսքը ու նրանց տարրերը: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ է նշանակում ,,երաժշտական լեզու՛<br>• ՛Կարո՞ղ է լինել խոսքը երաժշտական |

**Վերջնարդյունքներ**

- **Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի** խոսակցական և երաժշտական ինտոնացիաների միջոցով և ճանաչի դրանք:
- **Համեմատի** գրական և երաժշտական խոսքը
- **Ստեղծի** խաղային և հեքիաթային կերպարներ արտահայտիչ երգեցողության միջոցով, կատարի շնչառություն ըստ ֆրազների:
- **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն ,,բնական՛՛ և ռիթմական նվագարաններով:
- Ձեռքի նշաններով **կատարի** երկձայն մեղեդիներ:
- **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնա-գիտական եզրույթներ:
- **Համեմատի** ժամանակակից, նաև նոր տեխնոլոգիաներով ստեղծված և դասական մի քանի ստեղծագործություններ, ընդգծի ընդհանրու-թյուններն ու առանձնահատկությունները և հիմնավորի իր նախասիրությունները:
- **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:

| Թեմայի բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|---|
| • Տարբեր բնույթի երգեր, երաժշտական ստեղծագործություններ: | • Ունկնդրել և կատարել տարբներ բնույ-թի երգեր և երաժշտական ստեղծագոր- | • Օրինաչափություններ<br>Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու |

<table>
<tr>
<td>

- Երաժշտական և գրական խոսք:

</td>
<td>

ծություններ

- Որոշել երաժշտական խոսքի տարրերը՝ մոտիվ, ֆրազ, նախադասություն, պարբերություն
- Որոշել երաժշտական ֆրազները լսողությամբ և նոտաներով, երգերի կատարման ընթացքում շնչել ըստ ֆրազների

Համեմատել երաժշտական և գրական խոսքը, նրանց տարրերը, նշել ընդհանրությունները և առանձնահատկությունները:

</td>
<td>առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման արդյունքում: Օրինակ՝ սովորողները հասկանում են, որ խոսակցական և երաժշտական լեզուների զարգացման օրինաչափությունները նման են իրար: Նա համեմատում է գրական և երաժշտական խոսքերը, ցույց է տալիս ընդհանրությունները՝ ռիթմը, շեշտը, մոտիվը, ֆրազը նախադասությունը, պարբերությունը առոգանությունը և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:</td>
</tr>
<tr>
<td colspan="3">

Միջառարկայական կապեր

- **Մայրենի**-Կարողանա գրագետ խոսքով բացատրել գրական խոսքի և երաժշտական խոսքի ընդհանրությունները և առանձնահատկությունները:

</td>
</tr>
<tr>
<td colspan="3">

**Կապը ՀՊՉ-ի վերջնարդյունքների հետ**

- **S1, S10, S16, S17, S18, S19, S24, S27, S28, S30, S32**

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">Թեմա 3.</td>
<td>Ժողովրդական ծեսեր /8 ժամ/</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

Նպատակներ

- Ձևավորել պատկերացումներ ժողովրդական ծեսերի մասին
- Ձևավորել գիտելիքներ դրանց նպատակների, բովանդակության, կառուցվածքի և իրականացման վերաբերյալ
- Կատարել ծեսերի ընթացքում կատարվող երգերը, խմբերգերը, շուրջպարերը և խաղերը
- Դրսևորել հետաքրքրություն ժողովրդական ծեսերում խոսակցական և երաժշտական ինտոնացիաների նկատմամբ
- Բեմականացնել ծեսերը և արժևորել ժողովրդական ավանդույթները:

</td>
<td>

Ուղղորդող հարցեր

- Ի՞նչ է նշանակում ժողովրդական ծես
- Ձեր ընտանիքում նշու՞մ եք որևէ ծես, կամ ծիսական արարողություն:

</td>
</tr>
<tr>
<td colspan="3">

Վ երջնարդյունքներ

- **Ճանաչի և ներկայացնի** ժողովրդական ծիսական երաժշտությունը
- **Ստեղծի** կերպարներ ժողովրդական ծեսերից արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով:
- **Բեմականացնի** ժողովրդական ծեսերից հատվածներ և **ստեղծի** հետաքրքրաշարժ երաժշտական կերպարներ:
- **Երգի** /մենակ կամ խմբով/ ժողովրդական տարբեր ծեսերի երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ
- **Բացատրի** ծեսերի բովանդակությունը, կառուցվածքը, **ներկայացման** ձևը, ցուցաբերի հուզական արձագանք,
- **Վերլուծի** դրանք, մեկնաբանի խոսակցական և երաժշտական ինտոնացիաները, կատարի ծեսին համապատասխան պարեր և շուրջպարեր,

</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| մեկնաբանի դրանց իմաստը։<br>• **Նկարագրի** ծիսական ավանդույթների փոփոխությունները տարբեր դարաշրջաններում<br>• **Բացատրի ժողովրդական ծեսերի** դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում, բացատրի, որ ինքը ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը։ | | |
| **Թեմայի բովանդակությունը**<br>• Հայ ժողովրդական ծեսեր<br>• Խոսակցական և երաժշտական ինտոնացիաները ժողովրդական ծեսերում<br>• Ժողովրդական ավանդույթներ, տոնախմբություններ։ | **Առաջարկվող գործունեության ձևեր**<br>• Ուսումնասիրել ժողովրդական ծեսերը<br>• Բացատրել ժողովրդական ավանդույթները և դրանց նպատակը<br>• Սովորել և կատարել տարբեր ծիսական երգեր, պարերգեր, շուրջպարեր և խաղեր<br>• Նկարագրել դրանցից ստացած տպավորությունները և ներկայացնել գույներով կամ նկարելով<br>• Բեմադրել ծեսերից հատվածներ<br>• Արժևորել ժողովրդական արվեստը | **Ընդհանրական գաղափարներ**<br><br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես։ Ո՞վ ենք մենք։<br>Հաղորդակցվելով ազգային արվեստի ավանդույթներին, ժողովրդական ծեսերին սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչ արմատներ ունի, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնաարտահայտվել ազգային ծիսական երգերի միջոցով։ Համընկնում է իր և իր ընտանիքի, ընկերների պատկերացումները երաժշտության մասին, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով ինչ դեր ունի այն իր կյանքում։ Կարևոր է հասկանա, որ երաժշտությունը իր կյանքի անբաժանելի մասն է։<br><br>• **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը։<br>Մասնակցելով ծիսական արարողությունների բեմադրմանը սովորողը դրսևորում է ստեղծագործական հմտություններ, ներկայացնելով ազգային ավանդույթները յուրովի մեկնաբանությամբ՝ դերասանական հնարներով, ազգային պարերով, խաղերով և այլն։ |
| **Միջառարկայական կապեր**<br>• **Մայրենի-** Գրագետ կապակցված խոսքով ներկայացնի հայ ժողովրդական ավանդույթները, ծեսերը<br>• **Կերպարվեստ**- Կարողանա ստեղծել և ձևավորել ծիսական պարագաներ<br>• **Ես և շրջակա-** Կարողանա ներկայացնել բնության զարթոնքի և ժողովրդական ծեսի կապը | | |

- **Հայ ժողովրդի պատմություն-** Կարողանա պատմել հայ ժողովրդական ծեսերի և ավանդույթների մասին
- **Տեխնոլոգիա-** Կարողանա պատրաստել ծիսական հագուստներ և պարագաներ:

**Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**

- **S1, S10, S16, S17, S18, S19, S24, S27, S28, S30, S32**

| Թեմա 4. | Մանկական օպերաներ /10 / |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ծանոթացնել մանկական օպերաների հետ<br>• Ձևավորել պատկերացումներ օպերային թատրոնի մասին<br>• Ծանոթացնել Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի և աշխարհի հանրահայտ օպերային թատրոնների հետ /առցանց/<br>• Ձևավորել հմտություններ թատրոններում պատշաճ վարքագիծ և պահվածք դրսևորելու համար<br>• Կատարել ուսումնասիրություններ: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ո՞րն է մանկական օպերան<br>• Ի՞նչ տրամադրություն է փոխանցում մանկական օպերան<br>• Ի՞նչ է նշանակում թատրոն,<br>• Թատրոնի ի՞նչ տեսակներ գիտես:<br>• Ինչպե՞ս պիտի քեզ պահես թատրոնում |

**Վերջնարդյունքներ**

- **Բեմականացնի և ստեղծի** խաղային և հեքիաթային կերպարներ մանկական օպերաներից արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով:
- **Ստեղծի** երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվազակցություն ,,բնական՛՛ և ռիթմական նվազարաններով:
- **Երգի** /մենակ կամ խմբով/ հատվածներ մանկական օպերաներից՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, հետևելով խմբավարի շարժումներին:
- **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:
- **Բացատրի** ստեղծագործության բովանդակությունը, ցուցաբերի հուզական արձագանք, **մեկնաբանի** սեփական զգացողությունները: **Համեմատի և բացատրի** հակադիր բնույթի ստեղծագործությունները:
- **Համեմատի** ժամանակակից, նաև նոր տեխնոլոգիաներով ստեղծված և դասական մի քանի ստեղծագործություններ, ընդգծի ընդհանրություններն ու առանձնահատկությունները և հիմնավորի իր նախասիրությունները:
- **Դրսևորի** հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:
- **Արժևորի** օպերային արվեստը և դրսևորի պատշաճ վերաբերմունք:

| Թեմայի բովանդակությունը | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհարական գաղափարներ |
|---|---|---|
| • Հայկական և այլ ազգերի մանկական օպերաներ<br>• Աշխարհի հանրահայտ օպերային թատրոններ | • Ունկնդրել /նաև դիտել տեսագրություններ/ և արտահայտիչ կատարել մանկական օպերաներից հատվածներ<br>• Բնութագրել, մեկնաբանել երաժշտությունը և կատարել համա- | • **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Հաղորդակցվելով մանկական օպերաների հետ սովորողը դրսևորում է ստեղծագործական մոտեցումներ, երևակայություն, որի միջոցով ներկայացնում է տվյալ երաժշտական կերպարը իր պատկերացումներով: |

<table>
<tr><td></td><td>պատասխան երաժշտառիթմական կամ պարային շարժումներ<br>• Բեմադրել հատվածներ մանկական օպերաներից<br>• Զարգացնել երաժշտական ստեղծագործության նկատմամաբ հետաքրքրություն և հուզական արձագանք<br>• Նկարել կամ ներկայացնել իրենց տպավորությունները փոքրիկ պատմվածով:<br>• Այցելել օպերային թատրոն:</td><td></td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Մայրենի-Ուսումնասիրել մանկական օպերաների լիբրետտոները<br>• Թատրոն- Բեմադրել մանկական օպերաներից հատվածներ<br>• Կերպարվեստ- Նկարագրել մանկական օպերաների բեմական ձևավորումները<br>• Տեխնոլոգիա- պատրաստել համապատասխան հագուստներ և պարագաներ:</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ<br>• S1, S10, S12, S15, S16, S17, S18, S19, S22, S24, S27, S28, S30, S32</td></tr>
</table>

## Չորրորդ դասարան

<table>
<tr><th colspan="2">Թեմա 1.</th><th>Հայ ազգային երաժշտություն /20 ժամ/</th></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել պատկերացումներ հայ ազգային երաժշտության, նրա տեսակների և առանձնահատկությունների մասին<br>• Ձևավորել պատկերացումներ հայ ազգային նվագարանների և նվագախմբերի մասին,<br>• Ձևավորել սեր և հետաքրքրություն ազգային երաժշտության նկատմամբ<br>• Ձևավորել հմտություններ ազգային երաժշտության տեսակները և նրանց առանձնահատկություններն իմանալու, ճանաչելու և տարբերելու համար<br>• Ձևավորել գիտելիքներ հայ ժամանակակից երաժշտության մասին<br>• Արժևորել ազգային երաժշտությունը:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ է նշանակում ազգային երաժշտություն<br>• Ի՞նչ նշանակություն ունի ազգային երաժշտությունը քո կյանքում<br>• Ազգային երաժշտության ո՞ր տեսակն է քեզ ավելի հոգեհարազատ:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Ստեղծի հետաքրքիր երաժշտական կերպարներ արտահայտիչ երգեցողության և դերասանական հնարների միջոցով:<br>• Երգի /մենակ կամ խմբով/ հայ ժողովրդական և կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին: Կատարումը ուղեկցի պարային կամ ռիթմական շարժումներով<br>• Նկարագրի ազգային երաժշտությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ և նոր տեխնոլոգիաներ:<br>• Վերլուծի ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերըն ու ապրումները, հիմնավորի կատարած ռիթմական կամ պարային շարժումները:<br>• Ցուցաբերի հուզական արձագանք հայ ազգային երաժշտության նկատմամբ, համեմատի և բացատրի հակադիր բնույթի ստեղծագործությունները: Տարբերի և ցույց տա արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները:<br>• Համեմատի հայ ժամանակակից, նաև նոր տեխնոլոգիաներով ստեղծված և դասական մի քանի ստեղծագործություններ, ընդգծի ընդհանրությունններն ու առանձնահատկությունները և հիմնավորի իր նախասիրությունները:<br>• Դրսևորի հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ և հաճախակի այցելի համերգասրահներ:<br>• Բացատրի երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում:<br>• Բացատրի, որ ինքը ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն<br>• Հայ ազգային երաժշտություն<br>• Հայ ժողովրդական ծիսական երգեր, պարեր ու խաղեր<br>• Հայ հոգևոր երգեր<br>• Հայ կոմպոզիտորական երգեր<br>• Ժամանակակից երաժշտական</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել հայ ազգային երաժշտությունը<br>• Սովորել և կատարել հայ ժողովրդական , ծիսական, հոգևոր և կոմպոզիտորական երգերը<br>• Կատարումները ուղեկցել երա-</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով հայ ազգային երաժշտության տեսակները սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի արմատներ ունի, ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպիսի</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| ուղղությունները Հայաստանում: | ժշտառիթմական և ազգային պարային շարժումներով կամ ամբողջական պարերով<br>• Բեմականացնել ազգային ծեսերը և կատարել համապատասխան երգերը, պարերը և խաղերը<br>• Կատարել ուսումնասիրություններ, հետազոտական աշխատանքներ ազգային երաժշտության թեմաներով: | երաժշտական նախասիրու-թյուններ ունի, ինչպես կարող է ինքնաարտահայտվել ազգային մանկական երգերի և երաժշտության միջոցով: Համընկնում է իր և իր ընտանիքի, ընկերների նախասիրությունները ազգային երաժշտության մասին, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևոր է **բացատրի,** որ ինքը ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի**-Գրագետ կապակցված խոսքով ներկայացնել հայ ժողովրդական հեքիաթներ, ավանդապատումներ, պատմվածքներ
- **Կերպարվեստ**-Կարողանա ներկայացնել հայ ազգային կերպարվեստի նմուշները
- **Հայ ժողովրդի պատմություն**-Կարողանա բացատրել հայ պատմական անցքերի և հայ ազգային երաժտության տեսակների կապը
- **Հայ եկեղեցու պատմություն**- Կարողանա հասկանալ և կատարել հայ հոգևոր երգերը
- **Մշակույթ**- Կարողանա ներկայացնել հայկական ազգային ավանդույթները, ծեսերը:
- **Պարարվեստ**- Կարողանա կատարել հայկական ժողովրդական պարեր
- **Թատրոն**- Կարողանա բեմականացել ազգային ծեսերը
- **Տեխնոլոգիա**- Կարողանա պատրաստել ազգային ծիսական պարագաները:
- **Ֆիզկուլտուրա**- Կարողանա ներկայացնել և խաղալ ազգային, ծիսական խաղերը:

**Կապը հՀարակրթության Պետական Չափորոշչի վերջնարդյունքների հետ**
**S1, S10, S12, S15, S16, S17, S18, S19, S22, S24, S27, S28, S30, S32**

| Թեմա 2. | Մշակութային բազմազանություն/14 ժամ/ |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ձևավորել պատկերացումներ մշակութային բազմազանության մասին<br>• Ձևավորել պատկերացումներ այլ ժողովուրդների երաժշտական արվեստի մասին<br>• Ձևավորել հմտություններ այլ մշակույթները բնութագրելու, հասկանելու և մեկնաբանելու համար<br>• Ձևավորել հմտություններ համեմատելու և մեկնաբանելու հայ և այլ ազգերի երաժշտությունը<br>• Ձևավորել հմտություններ երաժշտության միջոցով բնութագրելու տարբեր ժողովուրդների կենցաղը, սովորությունները, ավանդույթները | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ է նշանակում մշակութային բազմազանություն<br>• Այլ ժողովուրդների երաժշտությունը սիրելու և հասկանալու համար պե՞տք է արդյոք իմանալ նրանց լեզուն<br>• Ինչքա՞ն և ինչպե՞ս ես շփվում այլ ժողովուրդների երաժշտության և ընդհանրապես արվեստի հետ: |

- Ձևավորել հարգանք, սեր և հանդուրժողականություն այլ մշակույթների նկատմամբ
- Արժևորել մշակութային բազմազանությունը:

**Վերջնարդյունքներ**

- **Երգի** /մենակ կամ խմբով/ այլ ժողովրդական և կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին:
- Կատարումը ուղեկցի պարային կամ ռիթմական շարժումներով
- **Նկարագրի** ստեղծագործությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ և նոր տեխնոլոգիաներ:
- **Վերլուծի** ստեղծագործությունը, մեկնաբանի իր հույզերըն ու ապրումները, **հիմնավորի** կատարած ռիթմական կամ պարային շարժումները:
- **Ներկայացնի** երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում նախագծային աշխատանքի միջոցով:
- **Մեկնաբանի,** որ երաժշտությունը համամարդկային ,,լեզու՞՞ է, այն նպաստում է ժողովուրդների մերձեցմանը, և **արժևորի** մշակութային բազմազանությունը:

| **Թեմայի բովանդակությունը** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական գաղափարներ** |
|---|---|---|
| • Տարբեր ժողովուրդների երաժշտություն<br>• Ժողովրդական և կոմպոզիտորական ստեղծագործություններ<br>• Դասական և ժամանակակից ստեղծագործություններ: | • Ունկնդրել, բնութագրել և մեկնաբանել այլ ժողովուրդների ժողովրդական և կոպոզիտորական ստեղծագործությունները<br>• Սովորել և կատարել այլ ժողովուրդների երգերը<br>• Կատարումները ուղեկցել ռիթմական և պարային շարժումներով<br>• Համեմատել տարբեր ժողովուրդների երաժշտությունը, ցույց տալ դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները<br>• Ուսումնասիրություններ, հետազոտական և նախագծային աշխատանքներ | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և Ե՞րբ<br>Սովորողները ուսումնասիրում են տարբեր ժողովուրդների երաժշտական արվեստը, որի միջոցով հաղորդակցվում են տվյալ ժողովրդի կենցաղին, սովորույթներին, ազգային առանձնահատկություններին:Նա հասկանում է, որ երաժշտությունը համամարդկային ,,լեզու՞՞ է, այն վերացնում է մարդկանց միջև բոլոր սահմանները, նպաստում է ժողովուրդների մերձեցմանը, և **արժևորում է** մշակութային բազմազանությունը: |

**Միջառարկայական կապեր**

- **Մայրենի –** Կարողանա ներկայացնել իր կարդացած տարբեր ժողովուրդների հեքիաթներ, պատմվածքներ
- **Կերպարվեստ-** Կարողանա ներկայացնել այլ ժողովուրդների կերպարվեստի նմուշներ
- **Հասարակագիտություն-** Կարողանա բացատրել, ինչ է իր պատկերացմամբ հանդուրժողականությունը, սերը, հարգանքը
- **Մշակույթ-** Կարողանա ընկալել և ներկայացնել մշակութային բազմազանության իմաստը, գաղափարը:

**Կապը Հանրակրթության Պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ**

- **Տ1, Տ10, Տ12, Տ15, Տ16, Տ17, Տ18, Տ19, Տ22, Տ24, Տ27, Տ28, Տ30, Տ32**

**Միջին դպրոց**

**5-րդ դասարան**

<table>
<tr><td colspan="2">Թեմա 1.</td><td>Երաժշտական կերպար, կերպարը դասական և ժամանակակից արվեստում /8ժամ/</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<ul><li>Ձևավորել պատկերացումներ երաժշտական կերպարի մասին</li><li>Ձևավորել հմտություններ երաժշտական կերպարները զգալու, հասկանալու, ճանաչելու և արտահայտչական ու նկարագրական երաժշտական կերպարները տարբերելու համար</li><li>Համեմատել դասական և ժամանակակից կերպարները արվեստի մեջ,</li><li>Դաստիարակել հուզական արձագանք, ապրումակցում երաժշտական կերպարների նկատմամբ:</li></ul></td><td>Ուղղորդող հարցեր<ul><li>Ի՞նչ է երաժշտական կերպարը և ինչպե՞ս են նրանք ստեղծվում:</li><li>Ինչո՞վ են տարբերվում դասական և ժամանակակից կերպարները</li><li>Ո՞ր երաժշտական կերպարներն են առավել շատ ներգործում քո վրա:</li></ul></td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<ul><li>Դրսևորի երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ ճիշտ և արտահայտիչ երգեցողության գործընթացում:</li><li>Երգի /մենակ կամ խմբով/ երգեր, ռոմանսներ և խմբերգեր, մաքուր ինտոնացիայով/նաև երկձայն/, հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով երաժշտական կերպարի մեղեդային գիծը:</li><li>Երաժշտական կերպարի ներկայացման ընթացքում կատարի բազմաձայն նվագակցություն ,,բնական՚՚ և ռիթմական նվագարաններով և պարային շարժումներ:</li><li>Վերլուծի երաժշտական նյութի հիմնական գաղափարը, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել երաժշտական կերպարը: Գնահատի ըստ նշված չափանիշների:</li><li>Մեկնաբանի, դասական և ժամանակակից երաժշտական կերպարը, որպես մարդկային զացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն և համեմատի արվեստի մյուս տեսակների ստեղծագործության կերպարի հետ:</li><li>Արժևորի արվեստի գեղարվեստական կերպարի ներգործության ուժը /նաև նոր տեխնոլոգիաների միջոցով ստեղծված/ մարդու զգացմունքների և գիտակցության վրա:</li></ul></td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր<ul><li>Ունկնդրել և կատարել տարբեր բնույթի և տեսակի երաժշտական ստեղծագործություններ և ներկայացնել երաժշտական կերպարները:</li><li>Վերլուծել և մեկնաբանել երաժշտական կերպարները:</li></ul></td><td>Թեմայի բովանդակություն<ul><li>Տարբեր բնույթի և ոճերի ստեղծագործություններ և երաժշտական կերպարներ,</li><li>Բնության տարբեր պատկերներ, երևույթներ և երաժշտական կերպարներ,</li><li>Մարդկային հույզեր, զգացմունքներ, երևակայություն և երաժշտական կերպարներ,</li></ul></td><td>Ընդհանրական գաղափարներ<ul><li>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ</li></ul>Որտե՞ղ և Ե՞րբ<br>Սովորողները հաղորդակցվելով տարբեր ժանրերի և ժամանակաշրջանների երաժշտական կերպարների հետ, հասկանում են, որ դրանցից յուրաքանչյուրի հիմքում ընկած են բնության երևույթներ, պատկերներ, մարդկային հույզեր կամ</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| • Նշել երաժշտական կերպարի բնույթ՝ արտահայտչական, թե՞ նկարագրական,<br>• Մեկնաբանել դասական և ժամանակակից ստեղծագործությունների երաժշտական կերպարները, նշել ընդհանրությունները և առանձնահատկությունները:<br>• Համեմատել երաժշտական կերպարները արվեստի այլ ճյուղերի կերպարների հետ և ընդգծել ընդհանրությունները և առանձնահատկությունները:<br>• Տրված գրական կամ կերպարվեստային կերպարին համապատասխան ստեղծել երաժշտական փոքրիկ կերպար,<br>• Տրված երաժշտական կերպարին համապատասխան ստեղծել գրական կամ նկարչական կերպար:<br>• Շրջակա միջավայրում որևէ պատմական հուշարձանի կամ արձանին համապատասխան երաժշտական ստեղծագործության ներկայացում և կերպարի վերլուծություն: | • Արվեստի տարբեր ստեղծագործություններ և կերպարներ,<br>• Երաժշտական կերպարի համապատասխանությունը գրական կամ կերպարվեստային կերպարին: | զգացմունքներ կյանքից վերցրած դրվագներ, և կոմպոզիտորը կիրառելով համապատասխան արտահայչամիջոցներ նկարագրում է յուրաքանչյուրի ապրած ժամանակաշրջանի կենցաղը, սովորությունները և այլն:<br>**Օրինաչափություններ**<br>Սովորողը կարևորելով կյանքի և երաժշտության կապը դասակարգում և ներկայացնում է դասական և ժամանակակից ստեղծագործությունների երաժշտական կերպարների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, նշում է ժամանկաշրջանի և երաժշտական արտահայտչամիջոցների զարգացման օրինաչափությունները: |

Միջառարկայական կապեր

- **Հայոց լեզու և գրականություն**- կարողանա ազատ զրուցել հայերեն, իրեն հետաքրքրող թեմաների մասին, կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ, համեմատել գրական կերպարները և երաժշտական կերպարները, ընդգծել առանձնահատկությունները և ընդհանրությունները
- **Կերպարվեստ**- համեմատել կերպարվեստային կերպարները և երաժշտական կերպարները, ընդգծել առանձնահատկությունները և

<table>
<tr><td colspan="3">ընդհանրությունները<br>• Պատմություն-ներկայացնել երաժշտության անդրադարձը պատմական կերպարներներին<br>• Մշակույթ- Շրջակա միջավայրում որևէ մշակութային հուշարձանի կամ արձանին համապատասխան երաժշտական ստեղծագործության ներկայացում և կերպարի վերլուծություն:</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:<br>• Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
<tr><td colspan="2">Թեմա 2.</td><td>Երաժշտական ստեղծագործության կառուցվածք և ձև /8ժամ/:</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ուսումնասիրել երաժշտական ստեղծագործության երկմաս, եռամաս կառուցվածքը, ռոնդո, վարիացիա և սոնատային ձևերը,<br>• Ճանաչել և տարբերել երկմաս և եռամաս կառուցվածքը, ռոնդո, վարիացիա և սոնատային ձևերով գրված ստեղծագործությունները, նշել առանձնահատկությունները,<br>• Ձևավորել հմտություններ ունկնդրվող երաժշտական ստեղծագործության կառուցվածքը վերլուծելու և այնտեղ առկա երաժշտակա կերպարների բնույթը մեկնաբանելու համար,<br>• Փորձել փոքրիկ մեկմասանի ստեղծագործությունը երկմասանի դարձնելու համար:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ կառուցվածք ունի երաժշտական ստեղծագործությունը<br>• Ի՞նչ առանձնահատկություններ ունեն երկմաս, և եռամաս, ռոնդո, վարիացիա և սոնատային ձևերը<br>• Կա՞ արդյոք տարբերություն մարդու հուզաշխարհի վրա դրանց ազդեցության մեջ:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Դրսևորի երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ երկմասանի և եռամաս կառուցվածքով երգերը և խմբերգերը ճիշտ և արտահայտիչ կատարելու համար,<br>• Կատարի և ներկայացնի բազմաձայն նվագակցություն ,,բնական՛՛ և ռիթմական նվագարաններով տարբեր ունկնդիրների համար:<br>• Վերլուծի և մեկնաբանի երկմասանի և եռամաս կառուցվածքով, ռոնդո, վարիացիա և սոնատային ձևով ստեղծագործությունների հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք, իր տպավորությունները ներկայացնի փոքրիկ էսսեով:<br>• Վերլուծի երաժշտական նյութը, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: Գնահատի ըստ նշված չափանիշների<br>• Տրված թեմայով հորինի վարիացիաներ:<br>• Մեկնաբանի, թե ինչու է հեղինակը իր մտահղացումը ներկայացրել մի քանի կերպարներով:<br>• Մեկնաբանի մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը նոր, ժանրերի, ոճերի առաջացման վրա:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<br>• Երկմաս և եռամաս կառուցվածք, ռոնդո, վարիացիա և սոնատային ձևեր<br>• Դրանց առանձնահատկությունները</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ունկնդրել տարբեր ստեղծագործություններ, նշել, թե ինչ կառուցվածք և ձև ունեն, և ցույց տալ երաժշտական կերպարները,<br>• Ունկնդրել ռոնդո, վարիացիա և սոնատային ձևեր ունեցող ստեղծագործու-</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Կառուցվածք և գործառույթ<br>Կառուցվածքը էական դեր ունի որևէ ստեղծագործության գաղափարի ուսումնասիրման և բացահայտման մեջ, երբ պարզվում է, թե ինչու է հեղինակը կառուցել իր երկը հենց այդ կառուց-</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| • Դրանցում առկա երաժշտական կերպարների առանձնա-հատկությունները և զարգա-ցումը: | թյուններ,<br>• Երգել երկմաս և եռամաս կառուցվածքով երգեր, ռոմանսներ, խմբերգեր,<br>• Կատարել ռիթմական նվագակցություն կամ պարային շարժումներ,<br>• Վերլուծել, և մեկնաբանել բազմամաս ստեղծագործությունները: | վածքով, ինչ նպատակ է հետապնդել, մասերից յուրաքանչյուրն ինչ դեր ունի իր մտքերը, հույզեր, զգացումները արտահայտելու գործում:<br><br>• Երկմաս և եռամաս կառուցվածք<br>• Բնորոշ գծեր և առանձնահատկություններ |

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն**- համեմատել գրական բազմամաս ստեղծագործությունների կառուցվածքը երաժշտականի հետ, ներկայացնել գրագետ կապակցված խոսքով:

**Կերպարվեստ**-բազմաթիվ կերպարներ ունեցող կերպարվեստային ստեղծագործությունների կառուցվածքը համեմատել երաժշտական ստեղծագործության կառուցվածքի հետ

**Թատրոն**- ներկայացնել դրամայի, կատակերգության, պիեսի և այլ ժանրերի կառուվածքների և բովանդակության կապը և համեմատել երաժշտության հետ:

**Պարարվեստ**- համեմատել երկմաս, եռամաս պարային ստեղծագործությունների ազդեցությունը մեկ մասանի ստեղծագործությունների հետ, նշել առավելությունները:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**

- **Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46**

| Թեմա 3. | **Երաժշտական ժանրեր՝ ռոմանս, խմբերգ, կանտատ /8ժամ/** |
|---|---|
| **Նպատակները**<br>• Ուսումնասիրել երաժշտական ժանրերը,<br>• Ձևավորել պատկերացումներ երաժշտական ժանրերի բնույթի, բովանդակության կառուցվածքի և ձևի մասին,<br>• Ձևավորել հմտություններ երաժշտական ժանրերը՝ ռոմանսը, խմբերգը, , կանտատը կատարելու և մեկնաբանելու համար<br>• Արժևորել ազգային և համաշխարհային երաժշտական արվեստի ստեղծագործությունների բարձրարժեք կատարումները: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ է երաժշտական ժանրը<br>• Ի՞նչ ժանրերի հետ ես առնչվել<br>• Մեր ժամանակներում ի՞նչ նոր ժանրեր են առաջացել: |

**Վերջնարդյունքներ**

- **Դրսևորի** երաժշտական գիտելիքներ և հմտություններ՝ ճիշտ և արտահայտիչ երգեցողության գործընթացում, արժևորի բոլոր ժանրերի և երգչային ձայների բարձրարժեք կատարումները:
- **Երգի** /մենակ կամ խմբով/ ռոմանսներ և խմբերգեր, հատվածներ կանտատներից, մաքուր ինտոնացիայով/նաև երկձայն/, հստակ ռիթմով, նրբե-րանգներով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվագակցությանը և խմբավարի շարժումներին: **Կատարի և ներկայացնի** բազմաձայն նվագակցություն ,,բնական՚՚ և ռիթմական նվագարաններով տարբեր ունկնդիրների համար:

<table>
<tr><td colspan="3">

- **Վերլուծի և մեկնաբանի** երգի, ռոմանսի, խմբերգի, կանտատի հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք, իր տպավորություննե-րը ներկայացնի փոքրիկ զեկույցով կամ էսսեով:
- **Վերլուծի** երաժշտական նյութը, որոշի, թե ո՞ր արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: Գնահատի ըստ նշված չափանիշների:
- Ազգային երաժշտության իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:

</td></tr>
<tr><td>

**Թեմայի բովանդակությունը**

- Խմբերգեր, ռոմանսներ, կանտատներ,
- Դրանց ընդհանրությունները և առանձնահատկու-թյունները,
- Ազգային և համաշխարհային հայտնի կատարողներ, երգչախմբեր և նվագա-խմբեր:

</td><td>

**Առաջարկվող գործունեության ձևեր**

- Ունկնդրել և կատարել խմբերգեր, ռոմանսներ, հատվածներ կանտատներից,
- Կատարումները ուղեկցել երաժշ-տառիթմական և պարային շարժումներով,
- Ունկնդրել վերլուծել, մեկնաբանել նշված ժանրերը
- Այդ ժանրերից ստացած տպա-վորությունները ներկայացնել փոքրիկ պատմությամբ կամ նկարով:

</td><td>

**Ընդհանրական գաղափարներ**

- **Օրինաչափություններ**

Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերու-թյունների բացահայտման արդյունքում:

Երաժշտական ժանրերը դասակարգվում են ընդհանուր հատկանիշների կամ նմանատիպ կառուցվածքների հիման վրա: Դասակարգումը թույլ է տալիս բազմատեսակ ստեղծագործությունները համակարգել սահմանափակ թվով խմբերում:

</td></tr>
<tr><td colspan="3">

Միջառարկայական կապեր

- **Հայոց լեզու և գրականություն-** ազատ զրուցել հայերեն իրեն հետաքրքրող թեմաների մասին, կազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, ներկայացնել և հիմնավորել նշված ժանրերի գրական հիմքի և երաժշտության բնույթի համապատասխանությունը, կիրառել երաժշտական մասնագիտական եզրույթներ:
- **Կերպարվեստ**-համեմատել կերպարվեստային ժանրերը երաժշտական նշված ժանրերի հետ, առաջարկել իր սովորած երգին, խմբերգին, կանտատին համապատասխան նկար կամ հուշարձան,
- **Թատրոն**-համեմատել թատերական ժանրերը երաժշտական ժանրերի հետ, նշել ընդհանրությունները և առանձնահատկությունները:

</td></tr>
<tr><td colspan="3">

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**

- *Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46*

</td></tr>
<tr><td colspan="2">Թեմա 4.</td><td>Երաժշտական ժանրեր՝ /սոնատային ձև/ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիա /10 ժամ/:</td></tr>
<tr><td colspan="2">

Նպատակներ

- Ծանոթացնել նվագարանային ժանրերին՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիա,
- Ձևավորել պատկերացումներ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիա ժանրերի բնույթի, բովանդակության, կառուցվածքի և ձևի մասին,
- Ձևավորել հմտություններ տվյալ ժանրերը տարբերելու, վերլուծելու և մեկնաբանելու

</td><td>

**Ուղղորդող հարցեր**

- Ի՞նչ ժանրեր կան, որ կատարում են միայն նվագարանները և նվագախմբերը,
- Ո՞ր ժանրն է քեզ առավել հետաքրքրում,
- Ո՞ր հայ կոմպոզիտորն է ստեղծել առաջի

</td></tr>
</table>

| | |
|---|---|
| համար:<br>• Արժևորել կենդանի կատարումները և այցելել համերգասրահներ: | սոնատը, կոնցերտը, սիմֆոնիան,<br>• Ներկա եղե՞լ ես որևէ ժանրի համերգային կատարմանը: |

**Վերջնարդյունքներ**

- Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ սոնատի, կոնցերտի կամ սիմֆոնիայից ստացած տպավորությունների մասին, կատարի եզրահանգումներ:
- **Մեկնաբանի** ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը, որպես մարդկային զգմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:
- **Վերլուծի և մեկնաբանի** սոնատի, կոնցերտի, սիմֆոնիայի, սիմֆոնիկ պատկերների հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք, իր տպավորությունները ներկայացնի փոքրիկ էսսեով:
- **Վերլուծի** երաժշտական նյութը, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: Գնահատի ըստ նշված չափանիշների:
- **Արժևորի** այդ ժանրերի միջոցով ստեղծված երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:
- **Արժևորի** այդ ժանրերի ազգային և համաշխարհային լավագույն կատարողների արվեստը:

| Թեմայի բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|---|
| • Սոնատային ձև՝ սոնատ, կոնցերտ, սիմֆոնիա, սիմֆոնիկ պատկերներ,<br>• Դրանց կառուցվածքը՝ մասերը,<br>• Դրանցում առկա երաժշտական կերպարների զարգացումը<br>• Դրանք կատարող նվագարանները և նվագախմբերը: | • Սոնատի, կոնցերտի, սիմֆոնիայի ունկնդրում ձայնագրության կամ տեսաերիզի միջոցով,<br>• Դրանց քննարկում, մեկնաբանում<br>• Նշված ժանրերում առկա մեկ կամ մի քանի կերպարների վերլուծություն և մեկնաբանում,<br>• Դրանք կատարող նվագարանները և նվագախմբերը,<br>• Քննարկումներ՝ երաժշտության և արվեստի մյուս ճյուղերի բազմաս ստեղծագործությունների մասին: | • **Օրինաչափություններ**<br>Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման արդյունքում:<br>Երաժշտական ժանրերը դասակարգվում են ընդհանուր հատկանիշների կամ նմանատիպ կառուցվածքների հիման վրա: Դասակարգումը թույլ է տալիս բազմատեսակ ստեղծագործությունները համակարգել սահմանափակ թվով խմբերում: |

**Միջառարկայակն կապեր**

- **Գրականություն**-բազմամաս գրական ստեղծագործությունները համեմատել երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների հետ, գրագետ կապակցված խոսքով ներկայացնել ընդհանրությունները և առանձնահատկությունները:
- **Կերպարվեստ**-Առաջարկել ներկայացնել երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունների բնույթին համապատասխան բազմամաս կերպարվեստային ստեղծագործություն:
- **Թատրոն**- ուսումնասիրել բազմամաս թատերական ներկայացումներ և վերլուծել նրանում առկա երաժշտության դերն ու նշանակությունը:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**

- **Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46**

**6-րդ դասարան**

| Թեմա 1. | Սինթետիկ արվեստներ<br>Մյուզիքլ, օպերետա /6/ ժամ |
|---|---|
| **Նպատակներ**<br>• Ձևավորել պատկերացումներ սինթետիկ արվեստների վերաբերյալ<br>• Ձևավորել հմտություններ դրանք ճանաչելու, վերլուծելու, մեկնաբանելու և բեմադրելու համար,<br>• Ձևավորել և զարգացնել հատուկ վերաբերմունք սինթետիկ արվեստների նկատմամբ՝ հետաքրքրություն, սեր, և համերգասրահներ ու թատրոններ այցելելու պահանջ: | **Ուղղորդող հարցեր**<br>• Լսե՞լ ես մյուզիքլի կամ օպերերտի մասին,<br>• Ե՞րբ են ստեղծվել և զարգացել,<br>• Ի՞նչ տարածում ունեն մեր ժամանակներում:<br>• Ծանո՞թ ես Երևանի թատրոնների ազդագրերին, կա՞ն այս ժանրերը դրանց մեջ: |

**Վերջնարդյունքներ**

- **Դրսևորի** երաժշտական և դերասանական գիտելիքներ և հմտություններ՝ երաժշտական կերպարը ճիշտ և արտահայտիչ ներկայացնելու համար,
- **Երգի** /մենակ կամ խմբով/ արիաներ և խմբերգեր մյուզիքլից և օպերետներից, մաքուր ինտոնացիայով/նաև երկձայն/, հստակ ռիթմով, նրբե-րանգներով,
- **Մեկնաբանի** ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը, որպես մարդկային զգացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:
- **Վերլուծի և մեկնաբանի** արիայի, խմբերգի հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք և **ապրումակցում**
- Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ, մյուզիքլի կամ օպերետի ստեղծման պատմության մասին
- **Արժևորի** ազգային և համաշխարհային արվեստը և ներկայացնի տարբեր միջավայրերում:
- Հաճախակի **այցելի** համերգասրահներ, թատրոններ:

| Թեմայի բովանդակությունը | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընհանրական գաղափարներ |
|---|---|---|
| • Մյուզիքլ և օպերետտա ժանրերը, որպես սինթետիկ արվեստի ամե-նամատչելի ձևերը,<br>• Դրանց բնույթն ու կառուցվածքը,<br>• Դրանցում առկա կերպարները և զարգացումը,<br>• Դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները,<br>• Դրանց դերն ու նշանակությունը | • Ունկնդրել կամ դիտել նշված ժանրերի ստեղծագործությունների տեսագրությունը<br>• Ուսումնասիրել լիբրետտոները<br>• Վերլուծել և մեկնաբանել երաժշտության համապատասխանությունը գրական տեքստին<br>• Կատարել հատվածներ տվյալ ստեղծագոր-ծություններից արտահայտիչ, երաժշտական և դերասանական հմտություններով | • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Որտե՞ղ և Ե՞րբ<br>Սովորողները երաժշտական մեծ կտավի ստեղ-ծագործությունները ուսումնասիրելիս, բացա-հայտում են հերոսների ապրած ժամանակա-շրջանը, նրանց կենցաղը, մարդկության պատ-մության շրջադարձային կետերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթությունների միջև |

| | | |
|---|---|---|
| տարբեր դարաշրջաններում: | • Բեմադրել տվյալ ստեղծագործություններից հատվածներ,<br>• Ստեղծել փոքրիկ մյուզիքըլ, սեփական սցենարով:<br>• Այցելել համերգասրահներ և թատրոններ: | հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br><br>• **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Պետք է երաժշտությունը ուսումնասիրել մեկ ամբողջության մեջ այն ամենի հետ, որը նրան ծնում և շրջապատում է՝ կյանքի, բնության, սովորությունների, բանաստեղծությունների, հեքիաթի, հավատքի, հուշարձանների, ամրոցների, գեղանկարների և շատ-շատ ուրիշ բաների հետ: Երաժշտության հետ հաղորդակցվելով սովորողը իր տպավորությունները, զգացողությունները պատկերում է բանավոր ելույթով, համապատասխան կերպարվեստային գործով կամ էլեկրոնային ուսումնական նյութ ստեղծելով, արժևորելով ստեղծարարությունը և գեղագիտությունը: |

**Միջառարկայական կապեր**

- **Գրականություն**-վերլուծել ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործության գրական հիմքը՝ լիբրետտոն, ստեղծման ժամանակաշրջանը, ոճը, արտահայտչականություն և այլն,
- **Կերպարվեստ**-Վերլուծել մյուզիքլի, օպերետի բեմի ձևավորման, դեկորների ընտրության, հագուստների ձևավորման համապատասխանությունը ստեղծագործության բովանդակությանը,
- **Թատրոն-Մյուզիքլի, օպերետի** բեմադրում, համապատասխան դերասանական խաղի տիրապետում, նոր տեխնոլոգիաների կիրառում և այլն:,
- **Պարարվեստ**-Ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործությանն համապատասխան պարերի ստեղծում և կատարում:
- **Մշակույթ**- Տվյալ սեղծագործության բովանդակությանը համապատասխան ծիսական տոնակատարությունների բեմադրում:
- **Տեխնոլոգիա-** բեմական հագուստների և պարագաների պատրաստում:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**

- *Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46*

<table>
<tr><td colspan="2">Թեմա 2.</td><td>Օպերա, բալետ / դասական, ազգային, ժամանակակից. 10 ժամ/</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ՝<br>• Ձևավորել պատկերացումներ ազգային և համաշխարհային օպերային և բալետային արվեստների վերաբերյալ,<br>• Ձևավորել հմտություններ դրանք ճանաչելու, վերլուծելու, մեկնաբանելու, կատարելու և հատվածներ բեմադրելու համար,<br>• Ձևավորել և զարգացնել հատուկ վերաբերմունք ազգային և համաշխարհային օպերային և բալետային արվեստի նկատմամբ՝ հետաքրքրություն, սեր, և համերգասրահներ ու թատրոններ այցելելու պահանջ:<br>• Արժևորել բարձր արվեստը</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ արվեստների միասնությունից են ստեղծվում այդ ժանրերը,<br>• Ինչու՞ են դժվարարամատչելի հասարակության լայն խավերի համար<br>• Այցելե՞լ ես որևէ երաժշտական թատրոն:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Երգի /մենակ կամ խմբով/ հատվածներ մանկական, դասական օպերաներից՝ խմբերգեր, արիաներ մաքուր ինտոնացիայով/նաև երկձայն/, հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային զիծը, հետևելով նվագակցությանը և խմբավարի շարժումներին:<br>• Ստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն և պարային շարժումներ<br>• Վերլուծի և մեկնաբանի օպերայի կամ բալետի հիմնական գաղափարը: Ցուցաբերի հուզական արձագանք, որոշի, թե որ արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը:<br>• Մեկնաբանի ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը, որպես մարդկային զացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:<br>• Ներկայացնի նոր տեխնոլոգիաների դերը օպերային ներկայացումներն ավելի տպավորիչ դարձնելու համար, արժևորի դրանց միջոցով ստեղծված երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:<br>• Մեկնաբանի մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը նոր, ժանրերի, ոճերի /օրինակ՝ ռոք-օպերա, օպերա-բալետ/ առաջացման վրա:<br>• Ազգային երաժշտության իմացությունն օգտագործի իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<br>• Մանկական, դասական, ազգային և ժամանակակից օպերային և բալետային երաժշտություն<br>• Դրանց բնույթն ու կառուցվածքը<br>• Երաժշտական կերպարների զարգացումը<br>• Նախերգանք- ֆինալ</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ուսումնասիրել ազգային և համաշխարհային օպերային և բալետային երաժշության նմուշները<br>• Ունկնդրել կամ դիտել ստեղծագործության տեսագրությունը<br>• Ուսումնասիրել լիբրետտոն<br>• Վերլուծել և մեկնաբանել երաժշտության համապատասխանությունը գրական</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ<br>Որտե՞ղ և Ե՞րբ<br>Սովորողները երաժշտական մեծ կտավի ստեղծագործությունները ուսումնասիրելիս, բացահայտում են հերոսների ապրած ժամանակաշրջանը, նրանց կենցաղը, մարդկության պատմության շրջադարձային կետերը, ինչպես</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| • Այդ ժանրերի զարգացումը 20-21-րդ դարերում: | տեքստին<br>• Կատարել հատվածներ տվյալ ստեղծագործություններից<br>• Բեմադրել մանկական կամ ազգային որևէ օպերայից հատվածներ<br>• Ներկայացնել հետազոտական աշխատանքներ՝ օպերային և բալետային արվեստը աշխարհում և Հայաստանում թեմայով կամ ,,Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն՛՛:<br>• Այցելել օպերային թատրոն: | նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br><br>• **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողը ուսումնասիրելով օպերային և բալետային արվեստը ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ իր տպավորությունների, զգացողությունների մասին, կատարում է ինքնուրույն եզրահանգումներ: Կազմակերպում է քննարկումներ, բանավեճեր: Այս գաղափարի ուսումնասիրության ընթացքում սովորողները փորձում են պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է ստեղծարարությունը, որն է դրա դերը, նպատակը կամ ինչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքի համար:<br>Սովորողը արժևորում է մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունները, հասկանում է դրանց գեղագիտական և բարոյական արժեքը, սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը: |

**Միջառարկայական կապեր՝**

- **Գրականություն**-վերլուծել ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործության գրական հիմքը՝ լիբրետտոն, ստեղծման ժամանակաշրջանը, ոճը, արտահայտչականությունը: Ներկայացնի արվեստների սկզբնաղբյուրների, նպատակների ընդհանրությունը, և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:,
- **Կերպարվեստ**-Վերլուծել օպերայի, բալետի բեմի ձևավորման, դեկորների ընտրության, հագուստների ձևավորման համապատասխանությունը ստեղծագործության բովանդակությանը,
- **Թատրոն**-Ուսումնասիրվող ստեղծագործության բեմադրում, համապատասխան դերասանական խաղի տիրապետում, նոր տեխնոլոգիաների կիրառում և այլն:,
- **Պարարվեստ**-Ուսումնասիրվող երաժշտական ստեղծագործությանն համապատասխան պարերի ստեղծում և կատարում:

<table>
<tr><td colspan="3">

• **Մշակույթ**- Տվյալ ստեղծագործության բովանդակությանը համապատասխան ծիսական տոնակատարությունների բեմադրում:<br>
• **Տեխնոլոգիա-** բեմական հագուստների և պարագաների պատրաստում:

</td></tr>
<tr><td colspan="3">

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**<br>
• ***Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46***

</td></tr>
<tr><td colspan="2">Թեմա 3.</td><td>

**Համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներ՝ դիրիժորներ, երգիչներ, երաժիշտներ /4ժամ/**

</td></tr>
<tr><td colspan="2">

Նպատակներ<br>
• Ծանոթացնել ազգային և համաշխարհային կատարողների հետ<br>
• Ուսումնասիրել նրանց կյանքը և ստեղծագործական գործունեությունը<br>
• Արժևորել նրանց տաղանդը, անցած ուղին, նրանց տեղը համաշխարհային արվեստի զարգացման գործընթացում<br>
• Արժևորել նրանց որպես մարդ –անհատի բարոյական կերպարը, որպես մարդկային ամենաբարձր արժանիքներ կրողներ:

</td><td>

Ուղղորդող հարցեր<br>
• Ի՞նչ գիտեք համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների՝ դիրիժորների, երգիչների, երաժիշտների մասին<br>
• Ունե՞ք արդյոք նախընտրած որևէ կատարող<br>
• Ինչու՞ եք նրան նախընտրում:

</td></tr>
<tr><td colspan="3">

Վերջնարդյունքներ<br>
• **Դրսևորի** հատուկ վերաբերմունք համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների նկատմամբ և **արժևորի** բոլոր ժանրերի և երգչային ձայների, դիրիժորների, երաժիշտների բարձրարժեք կատարումները:<br>
• Ինքնուրույն կամ խմբով **ստեղծի** փոքրիկ տեսանյութ տարբեր ժանրերի հանրահայտ կատարողների և նրանց կատարումներից ստացած իրենց տպավորությունների մասին, կատարի եզրահանգումներ:<br>
• Ազգային երաժշտության կատարողական արվեստի հանրահայտ անունների իմացությունն **օգտագործի** իր երկրի պատմությունը, մշակույթը, ազգային արժեքները ներկայացնելու և մեկնաբանելու համար:

</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>

• Համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողներ՝ դիրիժորներ, երգիչներ, երաժիշտներ<br>
• Նրանց կյանքը և ստեղծագործական գործունեությունը<br>
• Նրանց տեղը համաշխարհային արվեստում:

</td><td>

• Ուսումնասիրել հանրահայտ կատարողների և նրանց ստեղծագործական գործունեությունը<br>
• Ունկնդրել և դիտել նրանց կատարումները<br>
• Վերլուծել և գնահատել նրանց ավանդը համաշխարհային արվեստի զարգացման գործում<br>
• Ստեղծել հետազոտական աշխատանք կամ նախագիծ նրանց ստեղծագործական գործունեության մասին:<br>
•

</td><td>

• **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>
Որտե՞ղ և Ե՞րբ<br>
Սովորողները ծանոթանալով համաշխարհային և ազգային հանրահայտ կատարողների ստեղծագործական գործունեությանը, բացահայտում են նրանց ապրած ժամանակաշրջանը, նրանց կենցաղը, արժևորում են նրանց որպես մարդ –անհատի բարոյական կերպարը, որպես մարդկային ամենաբարձր արժանիքներ կրողներ:

</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Միջառարկայակն կապեր<br>• **Գրականություն**- Ներկայացնել գրականության ասպարեզում հայտնի ասմունքողների, գրականագետների արվեստը,<br>• **Թատրոն**- Ներկայացնել թատերական գործիչների, դերասանների արվեստը,<br>• **Պարարվեստ**- Ներկայացնել հանրահայտ պարողների, պարուսույցների, բեմադրիչների արվեստը,<br>• **Մշակույթ**- Ներկայացնել հանրահայտ մշակութային գործիչների, արվեստագետներին և արժևորել նրանց արվեստ: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**<br>• *Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46* | |
| Թեմա 4. | **Կինոյի և թատրոնի երաժշտություն, երաժշտությունը լրատվամիջոցներում՝ գովազդներում, հեռուստահա-ղորդումներում, երաժշտությունը և համակարգի-չը…/14/ ժամ** |
| **Նպատակներ**<br>• Ուսումնասիրել թատրոնի և կինոյի երաժշտությունը<br>• Ուսումնասիրել հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտությունը<br>• Ձևավորել պատկերացումներ դրանց նպատակի, միջոցների, բնույթի, կառուցվածքի մասին<br>• Ձևավորել հմտություններ դրանք կատարելու, վերլուծելու և մեկնաբանելու համար<br>• Ցուցաբերել քննադատական մտածողություն և վերաբերմունք<br>• Կարևորել նոր տեխնոլոգիաների դերը երաժշտության ունկնդրման և տարածման գործում<br>• Արժևորել բարձրարժեք երաժշտական ձևավորումները: | **Ուղղորդող հարցեր**<br>• Ի՞նչ նշանակություն ունի երաժշտությունը թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների և գովազդների համար<br>• Հրապուրվու՞մ ես հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտությամբ<br>• Կա՞ թատրոնի կամ կինոյի երաժշտություն, որը հաճախ կատարվում է համերգասրահներում<br>• Ունե՞ս նախընտրած սաունդթրեքներ: |
| **Վերջնարդյունքներ**<br>• **Երգի** /մենակ կամ խմբով/ երգեր և խմբերգեր կինոերաժշտությունից կամ թատրոնի երաժտությունից մաքուր ինտոնացիայով/նաև երկձայն/, հստակ ռիթմով, նրբերանգներով, զարգացնելով մեղեդային գիծը, հետևելով նվագակցությանը և խմբավարի շարժումներին:<br>• **Կատարի և ներկայացնի** բազմաձայն նվագակցություն ,,բնական՞՞ և ռիթմական նվագարաններով տարբեր ունկնդիրների համար:<br>• **Մեկնաբանի** ունկնդրվող ստեղծագործության երաժշտական կերպարը, որպես մարդկային զացմունքների, մտքերի, երևակայության, բնության երևույթների, իրադարձությունների նկարագրություն:<br>• **Վերլուծի** թատրոնի և կինոյի երաժշտությունը, որոշի, թե ինչպես է երաժշտությունը նպաստում դրանց հիմնական գաղափարի բացահայտմանը և ո՞ր արտահայտչամիջոցների կիրառման շնորհիվ է հեղինակը ներկայացրել իր մտահղացումը: Գնահատի ըստ նշված չափանիշների:<br>• **Ներկայացնի** նոր տեխնոլոգիաների դերը երաժշտական արվեստի նոր ուղղությունների առաջացման և զարգացման գործընթացում, և **ար-ժևորի** դրանց միջոցով ստեղծված երաժշտական կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:<br>• **Մեկնաբանի** մարդկության զարգացման փուլերի ազդեցությունը երաժշտական նոր, ժանրերի, ոճերի, ուղղությունների առաջացման վրա: | |

<table>
<tr><th>Թեմայի բովանդակությունը</th><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Ընդհանրական գաղափարներ</th></tr>
<tr><td>

- Թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների, գովազդների երաժշտություն
- Դրանց տեսաերիզների դիտում
- Դրանց համերգային կատարումներ:

</td><td>

- Ունկնդրել կամ դիտել տեսանյութեր թատրոնի, կինոյի, հեռուստահաղորդումների և գովազդների երաժշտությունից
- Կատարել, վերլուծել և մեկնաբանել դրանք
- Կազմակերպել քննարկումներ, ցուցաբերել քննադատական վերաբերմունք
- Արժևորել դրանց կարևորությունը արվեստի այդ տեսակների իմաստը, հիմնական գա դափարը ավելի տպավորիչ դարձնելու համար:

</td><td>

- **Անհատական և մշակութային արտահայտում**

Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողը ուսումնասիրելով կինոյի և թատրոնի, լրատվամիջոցների, գովազդների, հեռուստահաղորդումների երաժշտությունը ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ իր տպավորությունների, զգացողությունների մասին կատարում է ինքնուրույն եզրահանգումներ: Կազմակերպում է քննարկումներ, բանավեճեր, որի ընթացքում փորձում է պատասխանել այն հարցին, թե ի՛նչ է ստեղծարարությունը, որն է դրա դերը, նպատակը կամ ինչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքի համար:<br>Սովորողը արժևորում է մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունները, հասկանում է դրանց գեղագիտական և բարոյական արժեքը, սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը:

</td></tr>
<tr><td colspan="3">

Միջառարկայական կապեր

- **Գրականություն**-Վերլուծել ուսուցանվող ստեղծագործությունների սցենարները և սյուժեները,
- **Թատրոն**-Վերլուծել թատերական երաժշտության դերն ու նշանակությունը, ընդգծել և ներկայացնել արվեստի տարբեր ճյուղերի նպատակների, սկզբնաղբյուրների ընդհանրությունը և արտահայտչամիջոցների առանձնահատկությունները:
- **Կինո**- Վերլուծել երաժշտության՝ սաունդթրեքի համապատասխանությունը կինոյի սցենարին,
- **Մեդիաարտ** – Վերլուծել և մեկնաբանել հեռուստածրագրերի, հաղորդումների, գովազների երաժշտության գաղափարը, համապատասխանությունը հաղորդման թեմային, ներկայացնել գնահատողական վերաբերմունք,
- **Կերպարվեստ**-մենկաբանել բեմական ձևավորումների դերն ու նշանակությունը արվեստի տվյալ ստեղծագործության մեջ, արժևորել արվեստների փոխազդեցությունները:

</td></tr>
<tr><td colspan="3">

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**

- **Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46**

</td></tr>
</table>

## 7-րդ դասարան

<table>
<tr><th colspan="6">Թեմա 1.<br>Հանրամատչելի երաժշտություն<br>Հայ ազգային երգեր և պարեր(16ժ.)</th></tr>
<tr><td colspan="4">Նպատակներ<br>• Ձևավորել պատկերացումներ ազգային պարերի և պարերգերի ծագումնաբանության և զարգացման մասին,<br>• Ծանոթացնել ազգային երգ ու պարի նմուշներից յուրաքանչյուրի տարածա-շրջանային պատկանելությանն ու խորհուրդներին, կատարման տեղին ու ժամանակին,<br>• Կարևորել ազգային երգ ու պարի ուսուցումը սովորողների հայեցի դաստիարակության, ազգային ինքնության, ինքնագիտակցության, ինքնաճանաչողության և ի վերջո հայ քաղաքացի դաստիարակելու գործում:<br>• Հարգանք ներշնչել ժողովրդական ավանդույթների, ավանդական մշակույթի նկատմամբ, ցույց տալով դրանց տեղը համաշխարհային մշակույթի գանձարանում,<br>• Ձևավորել հմտություններ թատերականացված գործողություններում ազգային ավանդական մշակութային տեսակների շաղկապվածությունն ու նրանց ներդաշնակեցումը հասկանալու համար<br>• Արժևորել ազգային արվեստը:</td>
<td colspan="2">Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ նշանակություն ունի քեզ համար ազգային երգ ու պարը<br>• Ծանո՞թ ես դրանց ծագումնաբանությանը, զարգաց-մանը<br>• Ձեր ընտանեկան տոնախմբությունների ժամանակ կատարու՞մ եք ազգային երգ ու պար:</td></tr>
<tr><td colspan="6">Վերջնարդյունքներ<br>• Մեկնաբանի հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները,<br>• Ընտրի ազգային ռիթմական նվագարաններ և ստեղծի երաժշտառիթմական բազմաձայն նվագակցություն:<br>• Տրված արտահայտչամիջոցներով ստեղծի թատերականացված երաժշտական կերպար:<br>• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհան-դեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները<br>• Արժևորի երաժշտությունը, որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց, կարևորի ազգային ավանդույթները:<br>• Բացատրի երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները:</td></tr>
<tr><td colspan="2">Թեմայի բովանդակությունը<br>• Դիտակտիկ նյութեր,<br>• Պարերի, երգերի, երաժշտության գրառումներ,<br>• Տեսահոլովակներ ազգային երգ ու</td>
<td colspan="2">Առաջարկվող գործունեության ձևերը<br>• Ուսումնասիրել ազգային երգ ու պարի ծագումնաբանությունը և զարգացումը<br>• Դիտել համապատասխան տե-</td>
<td colspan="2">Ընդհանրական գաղափարներ<br>• Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով Հայ ազգային երգն ու պարը սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի արմատներ ունի,</td></tr>
</table>

<table>
<tr><td>պարի կատարումներով:</td><td>սահոլովակներ<br>• Սովորեցնել ազգային պարային տարրեր, ամբողջական պարեր և պարերգեր<br>• Բեմադրել ժողովրդական ավան-դույթներ և ծեսեր:</td><td>ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է ինքնարտահայտվել ազգային երգ ու պարի և երաժշտու-թյան միջոցով: Համընկնում է իր և իր ընտանիքի, ընկերների նախասիրությունները ազգային երաժշտու-թյան մասին, ինչպես կարող է իր զգացմունքները և հույ-զերը արտահայտել երաժշտության միջոցով ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևոր է բացատրի, որ ինքը ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Մշակույթ-մեկնաբանել ժողովրդական ավանդույթները ազգային երգ ու պարի համատեքստում<br>• Պարարվեստ-ուսումնասիրել ազգային երգերի ու պարերի փոխկապակցվածությունը,<br>• Թատրոն-բեմադրել ազգային ավանդույթներից, ծեսերից հատվածներ, կազմակերպել տվյալ թեմայով դասարանական, դպրոցական կամ համայնքային միջոցառում,<br>• Կերպարվեստ-Ներկայացնել ազգային զարդանախշերը<br>• Տեխնոլոգիա-Ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի ազգային տարազները:</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:<br>• Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
<tr><td colspan="3">Թեմա 2.<br>Հայ աշուղական արվեստ(6ժ.)</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ</td><td>Ուղղորդող հարցեր</td></tr>
<tr><td colspan="2">• Ծանոթացնել հայ երաժշտության ճյուղերից մեկին՝ գուսանա-աշուղական երգարվեստին<br>• Ձևավորել գիտելիքներ միջնադարյան գուսանների և 17-18-րդ դարերում ստեղծված և մինչև այսօր զարգացում ապրող աշուղական արվեստի մասին<br>• Ձևավորել գիտելիքներ աշուղական արվեստի հայ նշանավոր ներկայա-ցուցիչների մասին, ծանոթացնել նրանց արվեստին<br>• Ձևավորել հմտություններ աշուղական երգերը ունկնդրելու, ճանաչելու, գնա-հատելու և պատշաճ ձևով կատարելու համար:</td><td>• Ի՞նչ է իրենից ներկայացնում հայ գուսանա-աշուղական երգարվեստը<br>• Սիրու՞մ ես այս ժանրը, հաճա՞խ ես ունկնդրում, կամ կատարում<br>• Կա՞ն այսօր աշուղներ, որոնց արվեստը սիրում և գնահատում ես<br>• Ու՞մ ես նախընտրում:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Ունկնդրի, կատարի և արժևորի հայ աշուղական արվեստի նմուշները<br>• Ճանաչի և թվարկի աշուղական երգերի ոճային առանձնահատկությունները,<br>• Մեկնաբանի հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="6">• Ընտրի համապատասխան ռիթմական նվագարաններ և ստեղծի երաժշտառիթմական բազմաձայն նվագակցություն:<br>• Վերլուծի երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներգրավվի քննարկումների, բանավեճերի մեջ:</td></tr>
<tr><td colspan="2">Թեմայի բովանդակությունը<br>• Հայկական գուսանա-աշուղական արվեստ<br>• Հայտնի աշուղների կյանքը և ստեղծագործական գործունեությունը<br>• Աշուղական երգեր:</td><td colspan="2">Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ուսումնասիրել հայկական գուսանա-աշուղական արվեստը<br>• Ունկնդրել, վերլուծել, գնահատել աշուղական արվեստը<br>• Կատարել աշուղական հայտնի երգերը և մեկնաբանել իրենց կատարումները:</td><td colspan="2">Ընդհանրական գաղափարներ<br>• Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով Հայ աշուղական արվեստը սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի արմատներ ունի, ինչ է իր համար ազգային երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել ազգային երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում: Կարևոր է բացատրի, որ ինքը ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը:</td></tr>
<tr><td colspan="6">Միջառարկայական կապեր<br>• Հայ ժողովրդի պատմություն-Ուսումնասիրել հայ միջնադարյան արվեստը և նրա մի ճյուղը՝ գուսանական, այնուհետև աշուղական արվեստը,<br>• Հայ գրականություն-Ուսումնասիրել Սայաթ-Նովայի գրական ստեղծագործությունները և համեմատել նրա երգերի հետ,<br>• Մշակույթ-Ուսումնասիրել գուսանա-աշուղական արվեստի ծագումը և զարգացումը,<br>• Կինո-Դիտել Սայաթ-Նովային նվիրված կինոֆիլմը, քննարկել և դրսևորել գնահատողական վերաբերմունքը:<br>• Օպերա- դիտել հատվածներ Ալ. Հարությունյանի ,,Սայաթ Նովա՚՚ օպերայից:</td></tr>
<tr><td colspan="6">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հետ:<br>• Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
<tr><td colspan="6">Թեմա 3.<br>Ժամանակակից հայ կոմպոզիտորների երգարվեստը (6ժ.)</td></tr>
<tr><td colspan="4">Նպատակներ<br>• Ծանոթացնել հայ ժամանակակից կոմպոզիտորների երգարվեստին<br>• Ձևավորել գիտելիքներ ժամանակակից հայ կոմպոզիտորների մասին<br>• Գնահատել և արժևորել հայ ժամանակակից երգարվեստը:</td><td colspan="2">Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ գիտես հայ ժամանակակից երգարվեստի մասին<br>• Ճանաչու՞մ ես ժամանակակից կոմպոզիտորներին<br>• Սիրու՞մ ես նրանց երգերը<br>• Ձեր ընտանիքում հաճա՞խ եք ունկնդրում այդ երգերը<br>• Ու՞մ երգերն եք նախընտրում:</td></tr>
</table>

**Վերջնարդյունքները**

- **Կատարի** ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:
- **Ներկայացնի** նույն երաժշտական գաղափարի մեկնաբանությունների առանձնահատկությունները տարբեր կոմպոզիտորների կողմից,
- **Մեկնաբանի** հանրամատչել երաժշտության առանձնահատկությունները, թվարկի ժամանակակից տարբեր հեղինակների երաժշտական ոճի , ձեռագրի առանձնահատկությունները:
- Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը **ներկայացնի** բանավոր ելույթների, իսկ կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությունը՝ էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները
- **Փորձի ստեղծել** որևէ ժողովրդական երգի ժամանակակից մշակում և կատարի:
- **Արժևորի** երաժշտությունը, որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլան միջոց, արժևորի ազգային ավանդույթները:

| Թեմայի բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|---|
| • Ժամանակակից հայ կոմպոզի-տորների կյանքն ու ստեղծա-գործական գործունեությունը<br>• Ժամանակակից հայ երգարվեստ: | • Ուսումնասիրել ժամանակակից հայ կոմպոզիտորների կյանքն և ստեղծագործական գործունե-ությունը<br>• Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել կոմպոզիտորների երգերը<br>• Կատարել և գնահատել ժամա-նակակից հայ կոմպոզիտորների երգերը: | • **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք:<br>Ուսումնասիրելով ժամանակակից հայ կոմպոզիտորնե-րի երգարվեստը սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի արմատներ ունի, ինչ է իր համար ազգային ժա-մանակակից երաժշտությունը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի, Համընկնու՞մ է իր և իր ընտա-նիքի, ընկերների նախասիրությունները ազգային ժամա-նակակից երաժշտության մասին, ինչպե՞ս կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, ի՞նչ դեր ունի այն իր կյանքում: Կարևոր է **բա-ցատրի,** որ ինքը ուսումնասիրելով հայ ազգային երաժշտությունը դառնում է նրա կրողը, պահպանողը և սերունդներին փոխանցողը: |

**Միջառակայական կապեր**

- **Գրականություն**-Ուսումնասիրել ժամանակակից հայ բանաստեղծների /երգերի բառերի հեղինակներ/ պոեզիան
- **Մշակույթ**-Ուսումնասիրել հայ ժամանակակից երգարվեստը, ժամանակակից ազգային արվեստի համատեքստում,
- **Կերպարվեստ**-Համեմատել հայ ժամանակակից կերպարվեստի ստեղծագործությունները ժամանակակից երգարվեստի հետ, ցույց տալ ընդհանրական եզրերը:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**

- **Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46**

<table>
<tr><th colspan="3">Թեմա 4.<br>Դասական հանրամատչելի երաժշտություն /6 ժամ/</th></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել պատկերացումներ դասական հանրամատչելի երաժշտության մասին<br>• Տալ գիտելիքներ դասական այն ստեղծագործությունների մասին, որոնք հաճելի և մատչելի են բոլորի համար<br>• Ձևավորել հմտություններ նման ստեղծագործությունները բնութագրելու, մեկնաբանելու և իր նախասիրությունները ներկայացնելու համար<br>• Ձևավորել սեփական կարծիք և գեղագիտական ճաշակ<br>• Արժևորել դասական հանրամատչելի երաժշտությունը:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Քո կարծիքով կարո՞ղ է դասական երաժշտությունը լինել հանրամատչելի<br>• Կա՞ն դասական ստեղծագործություններ, որ կարող ես անընդհատ ունկնդրել կամ կատարել<br>• Ի՞նչ նախասիրություններ ունես, հիմնավորի:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Մեկնաբանի դասական հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները<br>• Իր անձնական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհան-դեսների միջոցով:<br>• Որևէ երաժշտական գաղափար ներկայացնի նոր տեխնոլոգիաների միջոցով, օգտագործելով արվեստի մյուս ճյուղերի հնարավորու-թյունները:<br>• Վերլուծի երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներ-գրավվի քննարկումների, բանավեճերի մեջ, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի իր սեփական կարծիքը:<br>• Բացատրի երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները:<br>• Փոքրիկ շնորհանդեսով ներկայացնի տարվա ընթացքում իր այցելած համերգասրահների և թանգարանների այցելություններից ստացած տպավորությունները:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն<br>• Դասական հանրամատչելի երաժշտություն</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ունկնդրել, կատարել, վերլուծել, մեկնաբանել դասական հանրամատչելի երաժշտության նմուշները<br>• Մեկնաբանել սեփական երաժշտական ճաշակը, ներկայացնել նախընտրած ստեղծագործությունների մասին շնորհան-դեսներ<br>• Մասնակցել տվյալ թեմայի մասին քննարկումներին, բանավեճերին, հար-գել ուրիշների կարծիքը հիմնավորել սեփական կարծիքը:</td><td>Ընդհանրական գաղափարներ<br><br>• Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ<br>Որտե՞ղ և Ե՞րբ<br>Սովորողները ծանոթանալով դասական հանրամատչելի երաժշտության նմուշներին, բացա-հայտում են դրանց ստեղծման ժամանակաշրջանը, արժեքները, մշակույթը, հասկանում են որ բարձրարժեք ստեղծագործությունները չեն ենթարկվում ժամանակի ցուցիչին, նրանք արդիական են բոլոր ժամանակների համար :</td></tr>
</table>

| |
|---|
| **Միջառարկայական կապեր**<br>• **Մայրենի**- Ուսումնասիրել դասական հանրամատչելի գրական ստեղծագործությունները և նշել համանուն գրական հիմքով երաժշտական ստեղծագործությունները,<br>• **Օտար լեզուներ**- Ներկայացնել դասական հանրամատչելի օտարալեզու գրական ստեղծագործությունները, որոնք հետագայում դարձել են երաժշտական մեծ կտավի ստեղծագործություններ,<br>• **Մշակույթ**-Դասական և հանրամատչելի արվեստի նմուշներ:<br>• **Կերպարվեստ**-Դասական կերպարվեստային ստեղծագործություններ, որոնք մատչելի և հասկանալի են բոլորի համար: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հետ:**<br>• ***Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46*** |

**8-րդ դասարան**

<table>
<tr><td colspan="3">Թեմա 1.<br>Ժամանակակից երաժշտական ուղղություններն աշխարհում և Հայաստանում՝ Ջազ, ռոք, , փոփ, բլյուզ, ֆոլկ, ռեպ …./20 ժամ/</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել պատկերացումներ ժամանակակից երաժշտական ուղղությունների մասին<br>• Ձևավորել գիտելիքներ երաժշտության ժամանակակից ուղղությունների՝ ջազի, փոփի, ռոքի, ռեպի և այլ ուղղությունների մասին<br>• Ձևավորել հմտություններ զգալու, հասկանալու և մեկնաբանելու ժամանակակից երաժշտական ուղղությունները<br>• Ձևավորել հմտություններ Հայաստանում առկա ժամանակակից երաժշտական ուղղությունները, հայտնի կատարողներին ճանաչելու և նրանց արվեստը մեկնաբանելու համար<br>• Ձևավորել հմտություններ սեփական երաժշտական ճաշակը ներկայացնելու և հիմնավորելու համար<br>• Ձևավորել հմտություններ նախընտրած կոմպոզիտորի կամ կատարողի մասին հետազոտական աշխատանք կատարելու համար:<br>• Արժևորել ժամանակակից երաժշտական արվեստը:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ է նշանակում ժամանակակից արվեստ<br>• Ժամանակակից ի՞նչ երաժշտական ուղղություններ գիտես<br>• Դրանցից ո՞րն ես նախընտրում և ինչու՞<br>• Հաճախու՞մ ես համերգասրահներ նշված ոճի համերգներ ունկնդրելու համար:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Լսողությամբ ճանաչի երաժշտական նոր ուղղությունները, թվարկի դրանց ոճային առանձնահատկությունները, բացատրի ոճերի բնութագրական գծերը:<br>• Ընտրի ռիթմական նվագարաններ և ստեղծի երաժշտառիթմական բազմաձայն նվագակցություն:<br>• Կատարի ժամանակակից ոճով ստեղծագործող հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:<br>• Մեկնաբանի և թվարկի ժամանակակից տարբեր հեղինակների երաժշտական ոճի , ձեռագրի առանձնահատկությունները:<br>• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները:<br>• Վերլուծի երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներգրավվի քննարկումների, բանավեճերի մեջ, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի իր սեփական կարծիքը:<br>• Ուսումնասիրի 20-21-դարերի երաժշտական ուղղությունները և ներկայացնի որևէ կոմպոզիտորի կամ կատարողի կամ համույթի ստեղծագործական գործունեությունը հետազոտական աշխատանքով:<br>• Արժևորի երաժշտությունը, որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<br>• Ժամանակակից երաժշտական ուղղությունները՝ Ջազ. առաջացումը</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ուսումնասիրել, ունկնդրել, կատարել, մեկնաբանել ժամանակակից</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| և զարգացումը աշխարհում և Հայաստանում,<br>• Ռոք, փոփ, բլյուզ, ֆոլկ, ռեպ ուղղությունները և դրանց տեսակները աշխարհում և Հայաստանում: | երաժշտական ուղղությունները աշխարհում և Հայաստանում<br>• Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, ստեղծել պաստառներ, շնորհանդեսներ, նախագծային աշխատանքներ և այլն: | Սովորողը ուսումնասիրելով 20-21-դարերի երաժշտական ուղղությունները ներկայացնում է հետազոտական կամ նախագծային աշխատանքներ իր տպավորությունների, զգացողությունների, երաժշտական ճաշակի մասին, կատարում է ինքնուրույն եզրահանգումներ: Կազմակերպում է քննարկումներ, բանավեճեր, ստեղծում է պաստառներ, շնորհանդեսներ և այլն: Այս թեմայի ուսումնասիրության ընթացքում սովորողները փորձում են պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է ստեղծարարությունը, որն է դրա դերը, նպատակը կամ ինչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքի համար:<br>Սովորողը արժևորում է բոլոր ժանրերի բարձրարժեք ստեղծագործությունները, հասկանում է դրանց գեղագիտական և բարոյական արժեքը, սովորում է դրանցով զարդարել և հարստացնել իր կյանքը: |

Միջառարկայական կապե

- **Հայ գրականություն**-Ներկայացնել ժամանակակից գրական ուղղությունները հայ գրականության մեջ և համեմատել երաժշտության հետ,
- **Կերպարվեստ**- Ներկայացնել ժամանակակից կերպարվեստի ուղղությունները և նրա ներկայացուցիչներին,
- **Մշակույթ**- Ներկայացնել արվեստի տարբեր ճյուղերի ժամանակակից ուղղությունները:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**

- ***Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46***

<table>
<tr><th colspan="6">Թեմա 2.<br>Ժողովրդական և դասական ստեղծագործությունների ժամանակակից մշակումները, և ժողովրդական նվագարանների կիրառումը ժամանակակից երաժշտական արվեստում /4 ժամ/</th></tr>
<tr><td colspan="4">Նպատակներ<br>• Ձևավորել պատկերացումներ ժողովրդական և դասական ստեղծագործությունների ժամանակակից մշակումների մասին<br>• Ձևավորել գիտելիքներ նման մշակումների վերաբերյալ<br>• Ձևավորել հմտություններ տվյալ մշակումներում ազգային նվագարանների և նրանց նորովի հնչողությունը ճանաչելու և գնահատելու վերաբերյալ<br>• Ձևավորել քննադատական վերաբերմունք ժողովրդական և դասական ստեղծագործությունների ժամանակակից մշակումների վերաբերյալ<br>• Արժևորել բարձրաճաշակ մշակումները:</td><td colspan="2">Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ նպատակ ունեն ժողովրդական և դասական ստեղծագործությունների ժամանակակից մշակում-ները<br>• Ինչպե՞ս են հնչում ժող. գործիքները ժամանակակից նվագախմբերում<br>• Ձեր ընտանիքում բոլորի՞ն է դուր գալիս նման մշակումները:<br>• Սիրո՞ւմ ես ժողովրդական և դասական ստեղծա-գործությունների ժամանակակից մշակումները</td></tr>
<tr><td colspan="6">Վերջնարդյունքներ<br>• Լսողությամբ ճանաչի տարբեր ժանրերի ժամանակակից մշակումները, երաժշտական ուղղությունները, թվարկի ստեղծագործության ոճա-յին առանձնահատկությունները, բացատրի ոճերի բնութագրական գծերը:<br>• Փորձի ստեղծել որևէ ժողովրդական երգի ժամանակակից մշակում և կատարի:<br>• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհան-դեսների միջոցով:<br>• Ուսումնասիրի 20-21-դարերի երաժշտական ուղղությունները և ներկայացնի որևէ կոմպոզիտորի կամ կատարողի ստեղծագործական գործունեությունը հետազոտական աշխատանքով:<br>• Արժևորի երաժշտությունը, որպես կյանքի և շրջակա միջավայրի գեղարվեստական արտացոլման միջոց, արժևորի ազգային արվեստը:</td></tr>
<tr><td colspan="2">Թեմայի բովանդակություն<br>• Ժողովրդական և դասական ստեղծագործությունների ժամանակակից մշակումներ,<br>• Տեսաֆիլմեր, համերգներից հատվածներ:</td><td colspan="2">Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Ուսումնասիրել տարբեր ժանրերի երաժշտության ժամանակակից մշա-կումները<br>• Ունկնդրել ժողովրդական և դասական ստեղծագործությունների ժամանակակից մշակումները, կատարել դրանք և մեկնաբանել<br>• Համեմատել ստեղծագործությունների մշակումները, բնագրի հետ, նշել առավելություններն ու թերությունները:</td><td colspan="2">Ընդհանրական գաղափարներ<br>• Անհատական և մշակութային արտահայտում<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողները այս թեմայով կազմակերպում են քննարկումներ, բանավեճեր, ստեղծում են շնորհան-դեսներ, հայտնում են ինքնուրույն կարծիքներ տվյալ մշակումների վերաբերյալ:<br>Ուսումնասիրում են այն ուղիները, միջոցները, որոն-ցով բացահայտում և արտահայտում ենք գաղափար-ներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշա-կույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտու-թյունը և ստեղծարարությունը:</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Կինո-Ուսումնասիրել միևնույն սցենարով նոր նկարահանումները, մեկնաբանել դրանց առավելությունները կամ թերությունները, և հին ֆիլմերի թվայնացումները<br>• Թատրոն-Դիտել տարբեր գրական ստեղծագործությունների նորովի բեմադրություն<br>• Գրականություն-տարբեր գրական ժանրերի նորովի մատուցում<br>• Կերպարվեստ –տարբեր գրական ստեղծագործությունների նոր նկարազարդումներ, ձևավորումներ<br>• Օպերայի, բալետի ժամանակակից բեմադրություններ, նորովի մեկնաբանություններ:</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:<br>• Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
<tr><td colspan="2">Թեմա 3.</td><td>Աշխարհահռչակ կատարողներ և մրցանակաբաշխություններ /4 ժամ/</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել գիտելիքներ հայ և այլազգի աշխարհահռչակ կատարողների և մրցանակաբաշխությունների մասին<br>• Ներկայացնել հայտնի երաժիշտ կատարողների և անսամբլների գործունեությունը,<br>• Ներկայացնել հայտնի մրցանակաբաշխությունները, դրանց ստեղծման պատմությունը, գործունեությունը և նպատակները<br>• Ծանոթացնել այսօր գործող մի քանի մրցույթների, փառատոնների ու նրանց հաղթողների հետ<br>• Խթանել հետաքրքրություն և սեր դեպի երաժշտական բոլոր ժանրերի բարձրակարգ կատարումները:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ծանո՞թ ես աշխարհում հայտնի երաժիշտ կատարողներին<br>• Կարո՞ղ ես նշել նրանց անունները<br>• Գիտե՞ս հայ երաժիշտ կատարողներին, որոնց, քո կարծիքով ճանաչում են աշխարհում:<br>• Աշխարհում կամ Հայաստանում հայտնի ի՞նչ մրցանակաբաշխությունների կամ փառատոնների ես հետևում:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Թվարկի ժամանակակից տարբեր հեղինակների, երաժիշտ կատարողների երաժշտական ոճի , ձեռագրի և կատարման առանձնահատկությունները:<br>• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհանդեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի հնարավորությունները:<br>• Իրականացնի իր սեփական ստեղծագործական գաղափարները, պատրաստվի և ներկայացնի բանավոր ելույթների միջոցով, օգտագործելով առցանց և վիդիո հնարավորությունները:<br>• Բացատրի երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները, նախընտրած կատարողները:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն<br>• Հայ և այլ ազգի հանրահայտ երաժիշտ կատարողներ, նվագախմբեր, դրանց մասին</td><td>Առաջարկվող գործունեության ձևներ<br>• Ունկնդրել հայ և այլ ազգի հայտնի երաժիշտների կատարումներից<br>• Քննարկել, վերլուծել և համեմատել</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ<br>Որտե՞ղ և Ե՞րբ<br>Սովորողները ծանոթանալով համաշխարհային և ազ-</td></tr>
</table>

<table>
<tr><td>տեղեկություններ<br>• Հայաստանում և աշխարհում հայտնի մրցանակաբաշխություն-ներ:</td><td>մյուս կատարողների հետ<br>• Դիտել հատվածներ հայտնի մրցանակաբաշխություններից<br>• Շնորհանդեսով կամ զեկույցով ներկայացնել իր սիրած կատարողին, նվագախմբին և մեկնաբանել:</td><td>գային հանրահայտ կատարողների ստեղծագործա-կան գործունեությանը, բացահայտում են նրանց ապ-րած ժամանակաշրջանը, նրանց կենցաղը, արժնորում են նրանց որպես մարդ–անհատի բարոյական կերպա-րը, որպես մարդկային ամենաբարձր արժանիքներ կրողներ:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Գրականություն-Ուսումնասիրել և ներկայացնել հայտնի գրողներին և ասմունքողներին և գրականության բնագավառում հայտնի մրցանակաբաշխությունները<br>• Թատրոն- Ուսումնասիրել և ներկայացնել հայտնի դերասաններին, բեմադրիչներին, և թատերական մի քանի մրցույթներ՝ մնջախաղի մրցույթ, մոնո ներկայացման մրցույթ և այլն,<br>• Կինո- Ուսումնասիրել և ներկայացնել փոքրիկ տեսաֆիլմ ,,Ոսկե ծիրան՚՚-ի և ,,Օսկար՚՚-ի մասին:</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:<br>Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
<tr><td colspan="3" align="center">Թեմա 4.<br>Հեղինակային և քաղաքային երգեր (6ժ.)</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ծանոթացնել հեղինակային և քաղաքային երգի ժանրերին<br>• Ծանոթացնել այդ ժանրում ստեղծագործող երաժիշտների և նրանց գործունեության հետ:<br>• Ձևավորել պատկերացումներ հեղինակային երգը, որպես սոցիալական երևույթ ներկաացնելու համար<br>• Ձևավորել հմտություններ այդ ժանրերի երգերը ճանաչելու, վերլուծելու և կատա-րելու համար:<br>• Արժևորել ժամանակակից հեղինակ կատարողների արվեստը:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ ես հասկանում հեղինակային, կամ քաղա-քային երգ ասելով<br>• Ճանաչու՞մ ես այդ ժանրի հայ կատարողներին<br>• Ո՞ր հեղինակի երգերն ու կատարումներն ես սիրում:<br>• Ձեր ընտանիքում հաճա՞խ եք լսում նրանց կատարումները:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Լսողությամբ ճանաչի տարբեր ժանրերը, ժամանակակից մշակումները, երաժշտական ուղղությունները, թվարկի երաժշտական ստեղծա-գործության ոճային առանձնահատկությունները, բացատրի ոճերի բնութագրական գծերը:<br>• Կատարի հայ և արտասահմանցի կոմպոզիտորների հեղինակային և քաղաքային ոճի երգերը:<br>• Մեկնաբանի հանրամատչելի երաժշտության առանձնահատկությունները, թվարկի ժամանակակից տարբեր հեղինակների, երաժիշտ կատարողների երաժշտական ոճի , ձեռագրի և կատարման առանձնահատկությունները:<br>• Իր անհատական երաժշտական տպավորությունները, հուզական արձագանքը ներկայացնի բանավոր ելույթների, էսսեների կամ շնորհան-դեսների միջոցով: Ներկայացման ընթացքում օգտագործի արվեստի մյուս ճյուղերի և նոր տեխնոլոգիաների հնարավորությունները:<br>• Վերլուծի երաժշտական ստեղծագործությունը, արտահայտի սեփական տեսակետը հեղինակի գաղափարի վերաբերյալ, ակտիվորեն ներ-</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| գրավվի քննարկումների, բանավեճերի մեջ, հարգի ուրիշների կարծիքը, հիմնավորի իր սեփական կարծիքը: | | |
| **Թեմայի բովանդակություն**<br>• Հեղինակային և քաղաքային ոճե-րի երգերի կատարողները և իրենց ստեղծագործական գոր-ծունեությունը<br>• Հեղինակային և քաղաքային ոճերի երգերի տարբեր կատա-րումներ: | **Առաջարկվող գործունեության ձևեր**<br>• Ուսումնասիրել հեղինակային և քաղաքային երգի երաժիշտների ստեղծագործական գործունեությունը<br>• Ներկայացնել հեղինակային երգը, որպես սոցիալական երևույթ<br>• Ունկնդրել, մեկնաբանել և կատարել նշված ոճերի երգերը<br>• Դիտել համերգներից հատվածներ<br>• Պատրաստել շնորհանդեսներ, զեկույցներ և այլ հետազոտական աշխատանքներ: | **Ընդհանրական գաղափարներ**<br>• **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողները այս թեմայով ներգրավվում են ակտիվ քննարկումների և բանավեճերի մեջ, հայտնում են ինքնուրույն կարծիքներ, հարգում են ուրիշների կար-ծիքը, հիմնավորում իր սեփական կար-ծիքը:Ուսումնասիրում են այն ուղիները, միջոցները, որոնցով բացահայտում և արտահայտում են իրենց գաղափարները, համոզմունքները, նախասի-րությունները, երաժշտական ճաշակը, արժեքները արժևորում են գեղագիտությունը և ստեղծարա-րությունը: |
| **Միջառարկայական կապեր**<br>• **Գրականություն**-Ուսումնասիրել հեղինակային և քաղաքային երգերի գրական տեքստերը, վերլուծել և մեկնաանել դրանց գաղափարները<br>• **Մշակույթ**-Վերլուծել և մեկնաբանել ազգային և քաղաքային արվեստի ընդհանրությունները, առանձնահատկությունները: | | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**<br>**Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46** | | |

## 9-րդ դասարան

<table>
<tr><th colspan="3">Թեմա 1. Երաժշտության և կյանքի կապը /34 ժ./</th></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<ul><li>Բացահայտել երաժշտության ազդեցությունը մարդու վրա և նրա դերը հասարակական կյանքում</li><li>Ձևավորել հմտություններ երաժշտական արվեստը որպես գեղեցկության և ճշմարտա-ցիության մարմնավորում ներկայացնելու, մեկնաբանելու և հիմնավորելու համար</li><li>Ձևավորել հմտություններ կյանքում և առօրյայում երաժշտության կարևորությունը գիտակցելու և արժևորելու համար:</li></ul></td><td>Ուղղորդող հարցեր<ul><li>Ի՞նչ նշանակություն ունի երաժշտու-թյունը մարդու և հասարակության կյանքում</li><li>Երաժշտությունը կարո՞ղ է միավորել կամ վերափոխել մարդուն:</li><li>Հնարավո՞ր է կյանքը պատկերացնել առանց երաժշտության:</li></ul></td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<ul><li>Ստեղծի / մենակ կամ խմբով/ երաժշտության և կյանքի կապը ներկայացնող ուսումնասիրություն, նախագիծ կամ հետազոտական աշխատանք:</li><li>Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի ազգային և համաշխարհային երաժշտական ստեղծագործություններով, համադրելով տարբեր ոճերի երաժշտական կերպարների յուրօրինակությունը:</li><li>Մեկնաբանի և ներկայացնի մարդու, հասարակության կյանքում երաժշտության դերի կարևորությունը, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:</li><li>Բնութագրի, վերլուծի այն ոճերի և ուղղությունների երաժշտական ստեղծագործությունները, որոնք իր կարծիքով մեծ ազդեցություն են ունենում հասարակական տարբեր իրավիճակներում, մեկնաբանի պատճառահետևանքային կապը, սեփական զգացողություններն արտա-հայտի զեկույցներով, շնորհանդեսներով և այլ միջոցներով:</li><li>Բացատրի, թե ինչ դեր ունի երաժշտությունը մարդկության կյանքում պատմական կարևոր իրադարձությունների ընթացքում:</li></ul></td></tr>
<tr><td>Թեմային բովանդակություն<ul><li>Տարբեր ոճերի և ուղղություն-ների երաժշտական ստեղծա-գործություններ</li><li>Հատվածներ համերգներից և երաժշտական ներկայացում-ներից, կինոնկարներից:</li></ul></td><td>Առաջարկվող գործունեության ձևերը<ul><li>Ներկայացնել երաժշտության դերը մարդու կյան-քում անհատական կամ խմբային զեկուցումներով, պաստառներով, շնորհանդեսներով</li><li>Ունկնդրել, կատարել, մեկնաբանել և հիմնավորել տարբեր ոճերի և ուղղությունների երաժշտության նմուշներ</li><li>Այցելել համերգասրահներ և թատրոններ:</li></ul></td><td>Ընդհանրական գաղափարներ<br>Պատճառ և հետևանք<br><br>Բնության մեջ, մարդկանց, ազգերի հարաբերու-թյուններում, գեղարվեստական երկերում, երաժշտական ստեղծագործություններում մշտապես կարելի է հանդիպել պատճառա-հետևանքային կարպերին. օրինակ՝ մարդկու-թյան պատմության կարևորագույն իրադարձու-թյունների ժամանակ ստեղծված երաժշտական ստեղծագործությունը ունենում է այդ գաղափա-րին համապատասխան արտահայտչամիջոց-</td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td></td><td>ներ՝ բնույթ, տեմպ դինակիկա, ռիթմ, ձև, կառուցվածք և այլն:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Գրականություն- Վերլուծել գրականության և կյանքի կապը<br>• Կերպարվեստ-Ներկայացնել կերպարվեստային ստեղծագործությունների և կյանքի կապը<br>• Մշակույթ- Մեկնաբանել մշակույթի հոգևոր և նյութական արժեքների և կյանքի կապը…</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:<br>Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
<tr><td colspan="3">Ենթաթեմա՝ 1. Իմ երաժշտական ճաշակը և երաժշտական միջավայրը</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել պատկերացումներ ժամանակակից երաժշտական միջավայրի բազմաձայնության մասին<br>• Ձևավորել և զարգացնել հմտություններ իր երաժշտական ճաշակը, որպես այդ միջավայրի ազդեցության արդյունք նկարագրելու և մեկնաբանելու համար<br>• Ձևավորել և զարգացնել հմտություններ սեփական կարծիք հայտնելու, հիմնավորելու և ներկայացնելու համար, միաժամանակ լսելով և հարգելով ուրիշի կարծիքը<br>• Արժևորել երաժշտության դերը իր կյանքում:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Հետաքրքրու՞մ է քեզ քո երաժշտական միջավայրը<br>• Հաճա՞խ ես ստիպված լինում ունկնդրել անորակ երգեր<br>• Քո երաժշտական ճաշակը կրու՞մ է միջավայրի ազդեցությունը<br>• Ինչպիսի երաժշտություն է քեզ պետք<br>• Ունե՞ս նախընտրած ոճեր<br>• Ո՞ր երգերն ես հաճախ ունկնդրում, կատարում, կապ ունեն դրանք քո հոգեվիճակի հետ<br>• Կարո՞ղ ես ապրել առանց երաժշտության<br>• Այցելու՞մ ես համերգասրահներ</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Ստեղծի / մենակ կամ խմբով/ ,,Իմ երաժշտական ճաշակը և երաժշտական միջավայրը´´ թեմայով երաժշտական զեկույց օգտվելով նոր տեխնոլոգիաներից:<br>• Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի ազգային և համաշխարհային երաժշտական ստեղծագործությունների նմուշներով<br>• Կիրառի իր ստեղծագործական ունակություններն ու հմտությունները երաժշտության դասերից դուրս:<br>• Ներկայացնի, մեկնաբանի և հիմնավորի իր սեփական կարծիքը, իր տպավորություններն ու զգացողությունները ներկայացնի օգտագործելով համացանցի հնարավորությունները, ճշտելով դրանց հավաստիությունը:<br>• Կատարելագործի իր հաղորդակցական հնարավորությունները, իրականացնի սեփական ստեղծագործական գաղափարները, պատրաստվի և հանդես գա թեմատիկ զեկուցումներով, ընտրել անհրաժեշտ նյութեր ստեղծագործական նախագծերի համար:<br>• Արժևորի երաժշտական արվեստի դերը գեղարվեստական մշակույթի մեջ և ներկայացնի իր երաժշտական նախասիրությունները, նախըն-</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="3">տրած կատարողները, փոքրիկ շնորհանդեսով ներկայացնի տարվա ընթացքում իր այցելած համերգների և թանգարանների հայտագրերը և տպավորությունները:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<br>• Ժամանակակից երաժշտական կամ հնչյունային միջավայրի բազմաձայնությունը<br>• Երաժշտական ագրեսիա<br>• Բանավեճեր, քննարկումներ, ներկայացումներ, կատարումներ:</td><td>Առաջարկվող գործունեության ձևերը<br>• Խմբային քննարկումներ բանավեճեր՝<br>• «Ի՞նչ է նշանակում բարձրակարգ երաժշտությունը և ինչ ռաբիսը»,<br>• «Ինչպե՞ս կարող է մարդը դիմակայել այսօրվա երաժշտական ագրեսիային».<br>• Ներկայացնել շնորհանդեսներ իր սիրած երաժշտական ժանրերի մասին:</td><td>Ընդհանրական գաղափարներ<br><br>• Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ եմ ես: Ո՞ վ ենք մենք:<br>Հաղորդակցվելով տարբեր ոճերի և ուղղությունների երաժշտության հետ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի: Համընկնում է իր և իր միջավայրի երաժշտական ճաշակը, հարմարվում է միջավայրի թելադրած կանոններին, թե իրենն է առաջարկում: Ինչպես է կարողանում իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում, կենցաղում, կարող է ապրել առանց երաժշտության:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br>• Հասարակագիտություն –ներկայացնել հասարակական միջավայրի ազդեցությունը մարդու գեղագիտական ճաշակի ձևավորման և զարգացման վրա<br>• Հայ գրականություն-ներկայացնել իր նախասիրությունները գրականության ասպարեզում<br>• Մշակույթ- ներկայացնել իր նախասիրած մշակութային հուշարձանները<br>• Կինո- ներկայացնել իր սիրած կինոֆիլմերը և դրանց ազդեցությունը իր գեղագիտական ճաշակի վրա<br>• Կերպարվեստ- ներկայացնել իր կերպարվեստային ճաշակը:</td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:<br>Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
</table>

<table>
<tr><th colspan="3">Ենթաթեմա՝ 2. Արվեստը՝ քո սեփական ձայնն է /8 ժամ/</th></tr>
<tr><td colspan="2">Նպատակները<ul><li>Զնավորել և զարգացնել իր գեղարվեստական գործունեության կարևորության գիտակցումը արվեստի/ նաև սիրողական/ բնագավառում, ցուցաբերել  քննադատական վերաբերմունք, դասերից դուրս երաժշտական գործունեություն ծավալելու ձգտում</li><li>Զնավորել հետաքրքրություն և պահանջ երաժշտական գործունեության տարբեր ձևերին մասնակցելու համար՝ երգչախումբ, երաժշտական այլ համույթներ, իրականացնել ՝ տնային համերգներ, որպես ժամանցի միջոց, որպես ընտանիքի, բարեկամների հոգեկան միասնության մարմնավորում: Մասնակցել դպրոցում և դրանից դուրս զարական, երաժշտական, թատերական և այլ գեղարվեստական միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքներին:</li><li>Նպաստել և խրախուսել սովորողի ստեղծագործական գաղափարների, մտահղացումների անհատական կամ խմբային հետազոտությունների արդյունքում ելույթով հանդես գալու, իր մտքերով, մտորումներով անկաշկանդ կիսվելու, և իր կարծիքը հիմնավորելու հմտության զարգացմանը:</li></ul></td><td>Ուղղորդող հարցեր<ul><li>Ի՞նչ է նշանակում ,,Արվեստը դա քո սեփական ձայնն է՛՛</li><li>Համաձայն ես դրա հետ</li><li>Կազմակերպում ես արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ կամ տնային համերգներ, ինչպե՞ս:</li></ul></td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<ul><li>Ստեղծի / մենակ կամ խմբով/ հայ կամ եվրոպական երաժշտության նվիրված միջոցառման նյութ կամ սցենար</li><li>Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի տարբեր ժանրերի և ուղղությունների երաժշտական ստեղծագործությունների միջոցով, համադրելով երաժշտական կերպարների յուրօրինակությունը:</li><li>Վերլուծի տարբեր ժամանակաշրջանի և ոճերի արվեստի գործերը և դրանցում առկա արտահայտչամիջոցների բազմազանությունը:</li><li>Հասկանա և գնահատի անցյալի երաժշտական ժառանգությունը և համեմատի ժամանակակից երաժշտական արվեստի հետ, բացատրի զարգացման միտումները:</li><li>Գիտակցի խմբային գործունեության արժեքը, ինքնաարտահայտումը մտորումների, քննարկումների, ունկնդրման և կատարման գործընթացում:</li><li>Բացատրի, թե ինչ դեր ունի երաժշտությունը իր կյանքում և արժևորի սեփական միջավայրի մշակութային օջախների գործունեությունը, որպես իր կյանքի անքակտելի մաս:</li><li>Զնակերպի իր վերաբերմունքը հասարակական երաժշտական երևույթների նկատմամբ, կարևորի իր գեղարվեստական գործունեությունը այդ գործընթացներում, ցուցաբերի քննադատական վերաբերմունք:</li></ul></td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակությունը<ul><li>Քննարկումներ, բանավեճեր, ներկայացումներ, ելույթներ</li></ul>Բազմաբնույթ և բազմատեսակ</td><td>Առաջարկվող գործունեության ձևերը<ul><li>Խմբային քննարկումներ՝ ,,Սիրողական երգեցողությունը, որպես մարդու ինքնաարտահայտման ձև՛՛ /երաժշտական նյութը՝ երեխաների ընտրությամբ/</li></ul></td><td>Ընդհանրական գաղափարներ<ul><li>Անհատներ և հարաբերություններ</li></ul>Ո՞վ եմ ես: Ո՞ վ ենք մենք:<br>Հաղորդակցվելով տարբեր ոճերի և ուղղու-</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| երաժշտական ստեղծագործություններ | • ,,Իմ դպրոցական երաժշտական համույթը´´<br>• ,,Արտադասարանական միջոցառումների նշանակությունը դպրոցի երաժշտական կյանքում և դրանց ազդեցությունը սովորողի ինքնուրույնության և գեղագիտական ճաշակի զարգացման վրա´´: | թյունների երաժշտության հետ սովորողը հասկանում է, թե ո՛վ է ինքը, ինչպիսի երաժշտական նախասիրություններ ունի: Համընկնում է իր և իր ընկերների նախասիրությունները, ինչպես կարող է իր զգացմունքները և հույզերը արտահայտել երաժշտական տարբեր գործունեության միջոցով, ինչ դեր ունի այն իր կյանքում, կենցաղում, կարող է ապրել առանց երաժշտության:<br><br>• **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:<br>Սովորողները այս թեմայով ներգրավվում են ակտիվ քննարկումների և բանավեճերի մեջ, հայտնում են ինքնուրույն կարծիքներ, հարգում են ուրիշների կարծիքը, հիմնավորում իրենց սեփական կարծիքը: Ուսումնասիրում են այն ուղիները, միջոցները, որոնցով բացահայտում և արտահայտում են իրենց գաղափարները, համոզմունքները, նախասիրությունները, երաժշտական ճաշակը, արժեքները արժևորում են գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

Միջառարկայական կապեր

- **Հայոց լեզու և գրականություն**- քննարկումների և բանավեճերի ընթացքում սովորողը կարողանա զրագետ և կապակցված խոսքով ներկայացնել իր մտքերը, մտածողության ձևերը, տրամաբանությունը, մտորումները, կարծիքը և այլն
- **Հասարակագիտություն-** զարգացնել սովորողների հաղորդակցման և սոցիալական շփման կարողությունները, նպաստել խմբային աշխատանքների արդյունքի կայացմանը, կրել դրանց պատասխանատվությունը, իրեն դրսևորել որպես համագործակցող, հանդուրժող, ապրումակցող:

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:**
***Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ42, Հ43, Հ44, Հ45, Հ46***

<table>
<tr><th colspan="3">Ենթաթեմա՝ 3. Իմ սիրելի համերգասրահները թատրոնները և թանգարանները /10ժամ/չորս</th></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել գիտելիքներ Երևանի համերգասրահների, թատրոնների և թանգարանների մասին,<br>• Դրսևորել հատուկ վերաբերմունք՝ հետաքրքրություն և պահանջ այդ մշակութային օջախները այցելելու համար,<br>• Արժևորել նրանց գործունեության դերը երաժշտական արվեստի զարգացման և տարածման գործընթացում:<br>• Արժևորել դրանց ազդեցությունը սովորողների գեղագիտական դաստիարակության և ճաշակի ձևավորման վրա:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Հաճա՞խ ես այցելում համերգասրահներ, թատրոններ, թանգարաններ<br>• Ներկա եղել ես երբևէ դասական ժանրի համերգի, եթե այո, ի՞նչ տպավորություն ես ստացել:<br>• Ինչպիսի՞ ոճեր ես նախընտրում<br>• Ո՞ր մշակութային օջախներն են քեզ հետաքրքրում:</td></tr>
<tr><td colspan="3">Վերջնարդյունքներ<br>• Ներկայացնի և մեկնաբանի տարբեր մշակութային օջախներ այցելելու շարժառիթը, նպատակը, և իր տպավորություններն ու զգացողություն-ները ներկայացնի առանձին զեկույցով, շնորհանդեսով կամ հետազոտությամբ, օգտագործելով երաժշտական մասնագիտական եզրույթներ:<br>• Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի տարբեր ոճերի և ուղղությունների երաժշտության միջոցով, մեկնաբանելով երաժշտական կերպարների յուրահատկությունը:<br>• Վերլուծի տարբեր ժամանակաշրջանի և ոճերի արվեստի գործերը և դրանցում առկա արտահայտչամիջոցների բազմազանությունը:<br>• Հասկանա և գնահատի անցյալի երաժշտական ժառանգությունը և համեմատի ժամանակակից երաժշտական արվեստի հետ, բացատրի զարգացման միտումները:<br>• Բացատրի, թե ինչ դեր ունի երաժշտությունը իր կյանքում և արժևորի սեփական միջավայրի մշակութային օջախների գործունեությունը, որպես իր կյանքի անքակտելի մաս: Գնահատի բարձրորակ կենդանի կատարումները և հաճախակի այցելի համերգասրահներ և թատրոններ:</td></tr>
<tr><td>Թեմայի բովանդակություն<br>• Հայկական և համաշխարհային հռչակ ունեցող թանգարաններ, համերգասրահներ, թատրոններ<br>• Քննարկումներ, զեկուցումներ, շնորհանդեսներ դրանց գործու-նեության և կրթական ծրագրերի մասին:</td><td>Առաջարկվող գործունեության ձևեր<br>• Կատարել ուսումնասիրություններ, դիտել համերգներից հատվածներ<br>• Այցելել հայկական և աշխարհի հանրահայտ թանգարանները՝ առցանց,<br>• Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել տարբեր ոճերի և ուղղությունների ստեղծագործու-թյունները<br>• Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ:<br>• Ներկայացնել արտադպրոցական մշակութային</td><td>Ընդհանրական գաղափարներ<br>• Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ<br>Որտե՞ղ և Ե՞րբ<br>Սովորողները այցելելով տարբեր մշակութային օջախներ ուսումնասիրում են հայտնի և ճանաչված մարդկանց կյանքը, կենցաղը, նրանց պատմությունները, ստեղծագործական գործունեությունը, մարդկության պատմության շրջադարձային կետերը, ինչպես նաև ան-հատների և քաղաքակրթության միջև հարաբե-</td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td>օջախների կարևորությունը իրենց աշխարհայացքի և գեղագիտական ճաշակի զարգացման գործընթացում:</td><td>րությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից և արժևորում են նրանց արվեստը մարդկության պատմության զարգացման համատեքստում: Այցելելով համերգասրահներ դրսևորում են համապատասխան վարքագիծ:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապեր<br><ul><li>Գրականություն- կարողանա հայերեն ազատ գրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կազմի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ, գրագետ և կապակցված խոսքով ներկայացնել մշակութային օջախներ այցելությունների տպավորությունները և արդյունքները,</li><li>Հասարակագիտություն-այցելությունների ընթացքում դրսևորել համապատասխան վարքագիծ և պահվածք</li><li>Համաշխարհային պատմություն-պատմությունից ձեռք բերած գիտելիքներն օգտագործի տվյալ մշակութային գործիչի ապրած պատմական ժամանակահատվածի վերլուծության համար:</li></ul></td></tr>
<tr><td colspan="3">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ:<br>Հ2, Հ26 , Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ35, Հ43, Հ44, Հ45, Հ46</td></tr>
</table>

Ավագ դպրոց

10-րդ դասարան

<table>
<tr><td colspan="3">Թեմա 1.<br>Հայ հոգևոր երաժշտության ծնունդը՝ Մ. Մաշտոց, Ս. Պարթև, Մ. Խորենացի: Շարականներ, Տաղեր, Գանձեր<br>Հայկական երաժշտության զարգացումը 8-15դդ.՝ Ն. Շնորհալի, Գ. Նարեկացի- <<Տաղեր>> /6 ժամ/</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակներ<br>• Ձևավորել գիտելիքներ հոգևոր երաժշտության վերաբերյալ<br>• Ծանոթացնել հայ հոգևոր երաժշտության պատմությանը<br>• Ձևավորել հմտություններ հայ հոգևոր երաժշտությունը ունկնդրելու, վերլուծելու, կատարելու և մեկնաբանելու համար<br>• Արժևորել հայ հոգևոր արվեստը:</td><td>Ուղղորդող հարցեր<br>• Ի՞նչ ես հասկանում հոգևոր երաժշտություն ասելով<br>• Ծանո՞թ ես այդ ժանրին<br>• Այցելու՞մ ես եկեղեցի, ի՞նչ ես զգում այդ պահին<br>• Երբևէ ներկա եղե՞լ ես Պատարագի արարողությանը:</td></tr>
